Google

Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

**Правила пользования**
Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

**О программе**
Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу `http://books.google.com`.

ANDOVER-HARVARD LIBRARY
AH SZUH S

HARVARD DEPOSITORY
SPECIAL COLLECTION
CIRCULATION RESTRICTED

816.9
Armenian
1852

816.9
Armenian
1852

יהוה

INSTITVTIO THEOLOGICA

ANDOVER FVNDATA MDCCCVII.

Ps. CXIX. 169.

JOH. XVII. 17.

AKI

ΟΥ ΧΡΙΣΤΟΥ.

Digitized by Google

Digitized by Google

Armenian language

An invitation to
Little Children to
come to Christ.

Digitized by Google

# ՀՐԱՏԱՐԱԿ

## ՄԱՆԿԱՆՑ

ԵՒ

## ՔՐԻՍՏՈՍ

Զէ՞ռ կանոն՝ փնտռողներդ զէ՞ռ կը գտնեն : Առակ • Ը • 17 :

ՍՄԻՐՆԻ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԿՈՒԼԻԷՆԼՄՈՍ ԿՐԻՖԻԹԻ

1852

Digitized by Google

Digitized by Google

# ՀՐԱՒԻՐԱԿ ՄԱՆԿԱՆՑ

ԵՒ

# ՔՐԻՍՏՈՍ

---

## Ը. ՔՐԻՍՏՈՍ ՔԵՂ. ՀՈԳԻԻՐ

Ընդկայ հովիւ-է պէս էր հօրը պէսպէս հո-
վուէ. գառնուկները էր բազրէովը պէսպէս
ժողվէ, ու զանոնք էր գրկացը մէջ պէսպէս
էրէ։ Եսայ. խ. 11։

Իմ ծաղկահասակ բարեկամներս, ձեզմէ շատերը ձեր ամենէն ցանկալի ժամանակները պարտէզին բոյսերուն, և դաշտին ծաղիկներուն մէջ խաղալով անցուցիք. ասա ձեր զբօսանացը մէջ չըտեսաք ան ցաթկոտող գառնուկները, որոնք պարզամիտ ու զուարթ կ'երևին, և իրենց մօրերնուն քովը կը խայտան։ Ընոնց ասա երջանիկ վիճակը՝ այսինքն ա-



Digitized by Google

բեղակին բերկրալի պայծառութիւնը վայելելը տեսնելով՝ ուրախացաք • բայց գուցէ ուրիշ ատեններ ալ ան փափուկ մարմին ունեցող կենդանիները մրրկածին հովերու ՝ կամ սաստիկ սառնամանեաց ժամանակ վտանգի մէջ տեսնելով՝ ձեր գորովալից սրտերը անոնք խղճացեր են ՝ վախնալով որ չըլլայ թէ ձմեռուան սաստկութիւնը խեղճերը կորսնցրնէ : Ան աղէխորով վիճակիս մէջ ի՞նչ բերկրալի բան մըն է տեսնել ան բարեգութ հովիւը՝ որ կու գայ անոնց օգնելու • զանոնք մէկտեղ կը ժողվէ ՝ ու զանոնք մէկ ապահով ապաստանարան մը կ՝առաջնորդէ :

Յիրաւի բերկրալի բան է ան հովիւը տեսնելը ՝ որ դեռահաս և տկար եղողները իր բազկացը վրայ կ՝առնէ ՝ ու զանոնք իր գրկացը մէջ կը կրէ ՝ մինչև որ ան մատաղահասակ կենդանիները զօրանան ու ոգի ստանան : Սակայն ՝ որդեակք ՝ ասկէ աւելի հաճոյական և զարմանալի զբուցելիք մը ունիմ ձեզի : Երդէն լսած էք Աստուծոյ Որդւոյն՝ Քրիստոսին վրայով թէ անիկայ երկինքէն իջաւ մեղաւորները փրկելու : Ան ալ լսած էք թէ անիկայ

աս աշխարհս չեկած՝ Ի՞նչ մեծ ու փա-
ռաւոր անձ մըն էր։ Ուրեմն ո՞ւշադիր մեծ
պիտի ըլլայ ձեր զարմանքը, երբոր լսէք
թէ ան Յիսուսը զինքը Հոգիս կ'անուա-
նէ։ Անիկայ զինքը սիրող ու իրեն ծա-
ռայութիւն ընող ժողովուրդը իր ոչխար-
ները կ'անուանէ, և նորահաս ու փա-
փուկ եղջիւրները, ինչպէս էք դուք, իր
գառնուկները։

Անիկայ ձեզ գառնուկներ կ'անուանէ.
վասն զի դուք անունց նման նորահաս ու
ոչխար էք, և անունց նման դուք ալ ու-
րիշներուն կը դիմէք ապահովութիւն և
պաշտպանութիւն գտնելու համար։

Դուք երէկուանները էք, ու քիչ
բանի տեղեկութիւն ունիք. այո՛ ձեզ
ստեղծող Աստուծոյն վրայով, և ձեզ
փրկելու եկող Փրկչին վրայով քիչ բան
գիտէք։ Քիչ է ձեր գիտութիւնը՝ թէ
աս աշխարհիս վրայով՝ որուն մէջ հիմա
կ'ապրիք, և թէ ան աշխարհին՝ որուն
մէջ յաւիտեան պիտի ապրիք։ Դուք
ամէն օր հոգևոր և մարմնաւոր բաներու
կողմէ կրթութեան պէտք ունիք. սա-
կայն ձեր բարեդութ Հոգիս իր հօտը
արածելու խօսք տուած է. անիկայ ձեզ

պիտի մնուցանէ իր խօսքին անարատ կաթովը ։ որով կարենաք զարգանալ ։

Անիկայ ըսած է . Խնդրեցէք՝ ու պիտի առնէք . փնտռեցէք՝ ու պիտի գտնէք ։ Արդեօք չէք գիտեր թէ ինչ պիտի խընդրէք ։ Ամէն բանէն առաջ խնդրեցէք իր շնորհքը՝ որ կեանք է ։ և իր գթութիւնը՝ որ կեանքէն աղէկ է ։ Խնդրեցէք անկէ որ իր անձին ։ իր մեծութեանն ու բարութեանը վրայով՝ ալ աւելի բան սորվեցընէ ։ որով կարող ըլլաք ալ աւելի սիրել զինքը ։ և աւելի աղէկ ծառայութիւն ընել իրեն ։

Դուք ոչ միայն տգէտ էք ։ այլ և տկար գառնուկի պէս անօգնական էք . դուք ինքնիրենիդ ձեր անձին ապահովութեանն ու պաշտպանութեանը համար միջոց մը չէք կրնար գտնել ։ Շատ վըտանգներ կան ձեր առջին՝ որ դուք չէք գիտեր . շատ հիւանդութիւններ կան ։ որոնց վիճակեալ է ձեր մանկական հասակը ։ և հազարաւոր դիպուածներ՝ որոնց ձեր փափուկ մարմինը ենթակայ է ։ Ի՞նչ երջանկութիւն է աս բոլոր տկարութիւններուն ու վտանգներուն մէջ մտածել թէ ձեր մարդասէր Հովիւը

խոստացած է ձեզ իր բազուկներուն մէջը ժողվել, և ձեզ իր գրկացը մէջ կրել։

Ձեր ծնողքները ձեզի համար շատ հոգ կը տանին. ուստի դուք ալ պարտաւորէք անոնց համար Աստուծոյ շնորհակալ ըլլալ։ Սակայն բարեգութ Հովիւն Յիսուս շատ աւելի հոգ կը տանի. անիկայ ձեր ամէն պիտոյքը կը լեցնէ. հիւանդութեան ժամանակ ձեզ ազատելու կարող է, նմանապէս մահուան ժամանակ ձեզ փրկելու։ Անիկայ կարող է ձեզ երջանիկ ընելու, թէ աս աշխարհիս մէջ, և թէ յաւիտենականութեան մէջ։

Սոսկալ մտածեցէք՝ որդեակք, թէ աս հաճոյական խօսքիս մէջ որչափ սէր և գութ կը պարունակուի. Անիկայ իր բազուկներովը պիտի ժողվէ զանոնք, ու իր գրկացը մէջ պիտի կրէ։ Աղէկ գիտէք թէ ինչ բան է գթառատ հօր մը բազկացը մէջ գգուիլը, և դիւրազգած մօր մը պարանոցին փաթթուիլը։

Որչափ շատ անգամ անոնք ձեր արցունքները սրբած են, և ձեր սրտին ամենախեթեւ ցաւերն անգամ թեթեւցուցած են. ուրեմն քանի որ անոնց սէրը և գութը կը վայելէք, մտածեցէք ինչն-

իրենիդ թէ՝ բարեգութ Հովիւը զիս ասոր պէս իր գրկացը մէջ ժողվելու խոս-տացած է : Ի՞նչ աստիճանի զիջում է, որ ինձի պէս տգէտ ու անօգնական ըս-տեղծուածի մը խնամելու կը հաճի : Տէրը իմ Հովիւս է . բանի մը պակասութիւն պիտի չքաշեմ :

Օրհնեա՛լդ Յիսուս՝ կը ցանկամ ան դառնուկներէն մէկն ըլլալ, որն որ դուն քու բազկացդ մէջ պիտի ժողվես, և քու գիրկդ պիտի կրես : Դս տգէտ եմ, բայց քեզի կու գամ որ բան սորվիմ . ես տկար ու անօգնական եմ, բայց քու բազկացդ կը դիմեմ ապահովութիւն և պաշտպանութիւն՝ գտնելու համար : Օ՜հ քու դառնուկներէդ մէկուն պէս ըրէ՛, սիրոյ՝ հեզութեան և խոնարհութեան կողմանէ . բնաւ մի թողուր որ քեզմէ խոտորիմ, կամ քեզ բարկացրնեմ՝ որ զիս քու հօտէդ դուրս ձգես : Պահէ՛ զիս բոլոր աշխարհային փորձութիւնե-րէն, և արժանացո՛ւր զիս քու երկնային թագաւորութեանդ մէջ բնակելու յա-ւիտեանս յաւիտենից :

Տէս բարեգութ Հովիւն Յիսուս կայներ է,
Իր ոչխարներն անունովնէն կը կանչ .

Digitized by Google

Տկարներուն իր բազուկներն է բացեր ,
Փառնուկներուն պարարտ խոտեր կը ջամբէ ։

Մեզ կը տանի ան երկնային վլուակներն ,
Որոնց ջուրը կենդանի է ու յստակ .
Անհուն սիրով կ'առաջնորդէ ան դաշտերն ,
Ուր գիտուրեան ծառերն են զարդ արանք ։

Եռ փարախէն զատուած հոս հոն թափառինք ,
Ցնեղ ու անձուկ ճամբէն ելլենք խոտորինք .
Գրաջ Հովիւնիս պատրաստ'ւ արքունն կը կենայ ,
Կ'ուղղէ մեր քայլն , որ չելլայ թէ մոլորինք ։

Հոսին մէջի խեղճ ցաւագար հիւանդին ,
Հովիւն ինքն է խնամատար հայրովին .
Ելէ՛ Փրկչին բազկացը մէջ ժողովինք ,
Մեն տեսակ որոգայթէ ազատուինք ։

---

## Գ . ՀՐԵԻՏԻՐ ՄԵՂԱՅԵՑՈՅ

Յիսուս ըսաւ . Եթող պուէք ապ մանր պողոցը որ ինձի գան ; և մի՛ արգիլէք ա-պոնք . ինչու որ ապանինքներուն է Աստուծոյ թագաւորութիւնը ։
Մարկ . Ժ . 14 ։

Ի՜նչ մեծ է ձեր յարգը ու երջանկութիւնը՝ որդեակք , որ Աստուծոյ Ար-

դէն՝ աշխարհի Փրկիչը ՝ձեզ այսպէս կը մեծարէ ։ Թէպէտ անիկայ այնչափ մեծ մէկ մըն էր ։ բայց կը տեսնէք որ խոնարհ էր . և թէպէտ իմաստուն էր ։ բայց զիջանող էր ։

Սակայն աս հաճոյական պատմութեանս բոլորը ձեզի պիտի ըսեմ ։ Երբոր Յիսուս իր սովորութեանը պէս՝ իրեն եկող բազմութեանը սորվեցընելու զբաղած էր ։ քանի մը բարեպաշտ ծնողքներ տղաքնին անոր բերին որ օրհնէ ։ Իր աշակերտները փոխանակ քաջալերութիւն տալու ։ զանոնք բերողները կը յանդիմանէին ։ Այս տեսնելով Յիսուս՝ դժուարեցաւ ։ ու ըսաւ անոնց . «Թող տուէք ատ մանր տղոցը որ ինծի գան ։ և մի արգիլէք ատոնք . ինչու որ ատանկներուն է Աստուծոյ թագաւորութիւնը» ։ Ու գրկելով զանոնք ։ օրհնեց ։

Խարի տղաքը խոնարհ ։ պարկեշտ և սորվելու փափաք ունեցող կ՚ըլլան ։ և. ամէն բարի մարդիկ ալ այնպէս պէտք է որ ըլլան ։ Երկինքի մէջ հպարտ ։ ինքնահաւան ։ կամ հարամիտ մէկ մը չկայ ։ Ան աշխարհին մէջ՝ ուրբերը սիրելի և քաղցր են . դուք ալ՝ ով որդեակք ։

Digitized by Google

պէտք է որ անոնց նմանիք ։ թէ որ կ'ուզէք Քրիստոսի հետ իր երկնային թագաւորութեանը մէջ կեանք վարել ։

Երկինքը սիրով լեցուն է ։ Աստուած ինքը սէր է ։ իր սուրբերը սիրոյ մէջ կը բնակին ։ և դուք՝ ո՛րդեակք ։ կը կարծէք որ ան սիրոյ աշխարհը երթաք ։ առանց զԱստուած ։ և Քրիստոս ։ ու մէկզմէկ սիրելու ։ Թէ որ դուք հպարտ ։ չարաչար ։ կամ չարամիտ էք ։ կը կարծէք որ Յիսուս պիտի ըսէ թէ՝ Ձեզի պէտք է երկնից թագաւորութիւնը ։ Ո՛չ ։ ասոնք անանկ հանգամանքներ են ։ որ ձեզ միայն խաւարին իշխանութեանը յարմար կ'ընեն ։ Եւ հիմա պիտի ցանկայիք մշտընջենաւորապէս չարաչար ։ հպարտ ։ և բարկասիրտ մարդոց մէջ կենալու ։ որոնք զԱստուած և զՔրիստոս ու մէկզմէկ կ'ատեն ։ Ո՛չ ։ մենք ձեզմէ աղէկ բաներ կը յուսանք ։ Դուք կը փափաքիք սուրբ ըլլալու ։ քանզի Աստուած սուրբ է ։ պարկեշտ ու խոնարհ ըլլալու ։ քանզի Յիսուս հեզ ու խոնարհ էր ։ սիրելի և քաղցր ։ որպէս զի Յիսուս կարենայ վստահութեամբ ըսելու թէ՝ Ձեզի պէտք է երկնից թագաւորութիւնը ։



Digitized by Google

Ի՞նչ մեծ բերկրութիւն պիտի զգան անոնք որ իրենց տղաքը Յիսուսին կը բերեն, զանոնք գթառատ Փրկչի մը գրկացը մէջ տեսնելով։ Իմ ծաղկահասակ բարեկամներս, կենաց և փրկութեան համար ձեր Յիսուս Քրիստոսի գիմելը տեսնելուն չափ ուրիշ բան մը չկայ, որուն փափաքին ձեր բարեպաշտ ծնողքները։ Թէպէտ հիմա անիկայ երկինքն է, իր սիրոյն և գթոյն բազուկները բաց են ձեզ ընդունելու։ Անիկայ կարող է ձեզի պէտք եղած ամէն տեսակ հոգևոր և մարմնաւոր բարիքները ձեզի մատակարարելու. անիկայ կարող է ձեզ օրհնելու թէ աս աշխարհիս մէջ, և թէ հանդերձեալին։

Ձեր ծնողացը աղօթքը ձեզ չեն կրնար փրկել, հապա դուք ձեր անձերուն համար պէտք է որ աղօթք ընէք։ Ո՛րդեակք, աս գորովագութ Փրկչին գացէք։ Ամէն տեսակ քաջալերութիւններն ունիք. ձեր երէցները ձեզ կը յորդորեն, ձեր ծնողքները ձեզ կը յորդորեն, Յիսուս ինքն ալ ձեզ կը յորդորէ և կը հրաւիրէ, ըսելով. "Եկէք ինծի. թող տուէք աս մանր տղոցը որ ինծի գան"։ Ուրեմն

կրնաք սիրոյ հրաւերը մերժել. ո՛չ, չէք կրնար, ու չէք ալ ուզեր։ Գացէք ուրեմն, որդեակք, ձեր երկրպագելի Փրկչին ոտքը խնկէք, ու անոր ըսէք. Կու գանք՝ ո՛վ Տէր, քու հրամանիդ համեմատ, քանզի յաւիտենական կենաց խօսքերը միայն քու քովդ են։

Խնկէք ո՛վ որդեակք՝ մեր Տէր Յիսուսին,
Ողի՛ք ունկնդիր իր քաղցր ձայնին.
Դրախտ որ ինքն է ձեզ հր սիրողը,
Ձեզմէ ամէնքն ալ պիտի էարգիլուին։

Անունք որ Փրկչին գիրկը կը դիմեն,
Դուստ օշնութիւն պիտի վայելեն.
Չի Տէր Յիսուսն է աղբիւր շնորհաց,
Ձրի կը բաշխէ անոնց՝ որ կ'ուզեն։

Ամէն ազգ ծնողք մեր Տէր Յիսուսին,
Սիրոյ յաղորանքն յայտնի դաւանին.
Հաւատ լսելով իր անսուտ բերանէն,
Անոնք են ժառանգ վերին դրախտին։

---

Digitized by Google

## Գ. ԵՐԵԿՇԱԲԹԻ ԻՍ ԳԻՇԵՐՈՒԿԵՆԵՐՈՒ

**Եղածէ իմ գառնուկներս։**
**Յովհ. ի՝. 15։**

Արդէն լսած էք՝ որդեակք, որ բարեգութ Հովիւն Յիսուս՝ երբոր երկրի վրայ էր, գառնուկները իր բազկացը մէջ կը ժողվէր, և զանոնք իր ծոցը կը կրէր։ Իսկ երբոր աս աշխարհէս մեկնելու, և իր Հօրը երթալու վրայ էր, բնականաբար իր հօտին վրայով պիտի մտածէր — թէ արդեօք իր ոչխարներն ու գառնուկները ինչ պիտի ըլլային. քանզի պիտի թողուր զանոնք անանկ աշխարհի մը մէջ, որ դժուարութիւններով ու վտանգներով լեցուն էր. կը վախնար որ օտար հովիւներու ձեռք իյնան, որ անոնք հոգ չը տանին հօտին, ոչ ալ զանոնք գայլարագեղ արօտները տանին. և այսպէս անհովիւ ոչխարներու նմանին։

Քանի որ Յիսուս այսպէս իր ոչխարներուն հոգը կը տանէր, իր բոլորտիքը եղող աշակերտներուն նայելով՝ դարձաւ Պետրոսին, որ առաջուց յայտնի զրուա-

ցեր էր թէ ուրիշներէն աւելի կը սիրէ իր Տէրը ։ ու ըսաւ անոր . Սիմոն՝ որդի Յովհաննու ։ զիս կը սիրես ։ Ան ալ ըսաւ անոր . Այո՛ Տէր ։ դուն գիտես որ քեզ կը սիրեմ ։ Յիսուս ալ ըսաւ անոր . Արածէ իմ գառնուկներս ։ Յիսուս երկրորդ ու երրորդ անգամ ալ ըսաւ անոր . Սիմոն՝ որդի Յովհաննու ։ զիս կը սիրես ։ Տրտմեցաւ Պետրոս ։ իրեք անգամ Զիս կը սիրես՝ ըսելուն համար ։ Եւ ըսաւ . Տէր ։ դուն ամէն բան կը ճանչնաս ։ և գիտես որ ես քեզ կը սիրեմ ։ Յիսուս ըսաւ անոր . Արածէ իմ ոչխարներս ։

Իմ սիրելի բարեկամներս ։ ինչու համար Յիսուս այսչափ շատ անգամ կը հարցընէ Պետրոսին՝ զինքը սիրելու վրայով ։ Ինքը գիտէր որ Պետրոս անշուշտ կը սիրէր զինքը ։ բայց կ՚ուզէր Պետրոսին սէրը փորձով իմանալ ։ և ցուցընել անոր թէ որչափ կը սիրէր իր հօտին գառնուկները ։ Իրաւցընէ զիս կը սիրես ։ Պետրոս ։ ցուցուր ինծի քու սէրդ՝ իմ ոչխարներս աբածելովդ . արածէ իմ գառնուկներս ։ իմ խօսքիս հաւատարիմ կաթոլիկ եկեղեցիովդ զանոնք ։ որով կարենան մնունդ

Digitized by Google

առնել ու մեծնալ. ըսէ անոնց, (թէ և աս աշխարհս կը թողում, և Հօրը քովկ կ'երթամ,) թէ տակաւին զանոնք կը սիրեմ. թէ կ'երթամ անոնց համար տեղ պատրաստելու, որպէս զի ուր որ ես եմ, անոնք ալ հոն ըլլան. և թէ նորէն պիտի գամ, և զանոնք իմ քովս պիտի ընդունիմ, որ անոնցմէ մէկը չկորսուի, և որ մէկը զանոնք իմ ձեռքէս չխլէ: Ա՛չ միայն Պետրոս, այլ և Աւետարանին բոլոր պաշտօնեաները Յիսուս Քրիստոսէն խրկուած հովիւներ են, որ իր հօտին խնամք տանին. և ինչպէս որ Պետրոսին ըսած է, անանկ ալ անոնց կ'ըսէ. Արածեցէք իմ ոչխարներս, արածեցէք իմ գառնուկներս:

Թէպէտ և ձեր երէցները խելացի և ուսումնական մարդիկ են, այսու ամենայնիւ մանկահասակ և տգէտ եղողներուն բան սորվեցընելու, և գոհ սրտիւ իրենց ուսումնական պարապմունքը մէկդի ձգելու յօժարամիտ են, որ ձեզի սորվեցընեն կրօնքին սկզբունքներն ու Աստուծոյ սէրը, որոնցմով կրնաք երջանիկ ըլլալ թէ աս աշխարհիս մէջ, և թէ երկինքի մէջ յաւիտեան: Ուրեմն ձեր

երախտագիտութիւնը պիտի չյայտնէք՝ մտադրութեամբ ականջ դնելով անոնց սորվեցուցածներուն ։ և ջանալով իմաստուն ըլլալու փրկութեան համար ։ Անոնք ոչ միայն ձեզի բան կը սորվեցընեն ։ հապա ձեզի համար աղօթք կ՚ընեն ։ անոնք շատ անգամ ձեզ իրենց սրտերուն մէջ կը կրեն Աստուծոյ առջևը ։ կը խնդրեն որ ինտոր որ օրէ օր հասակով մեծնալու վրայ էք ։ նոյնպէս ալ շնորհք և սիրով աճիք Աստուծոյ և մարդոց առջևը ։ կը խնդրեն որ Աստուծոյ սէրը ձեր սրտերուն վրայ հանդչի ։ և որ դուք ճանչնաք ու սիրէք ձեր հայրերուն Աստուածը ։

Արդ՝ անոնք որ այսպէս մարդասիրաբար ձեզի համար աղօթք կ՚ընեն ։ դուք ալ անոնց համար աղօթք պիտի չընէք ։ որ երբ ուրիշներուն սորվեցընելու ըլլան ։ իրենք ալ Աստուծմէ սորված ըլլան ։ և Յիսուս Քրիստոսով եղած ամէն հոգևոր օրհնութիւններով օրհնուին ։

Ի՞նչ հաճելի բան է տեսնել երէց մը ու իր ժողովուրդը՝ որ այսպէս իրարու համար աղօթք կ՚ընեն ։

Սակայն ո՛րդեակք՝ ամէն բանէն աւելի

ձեր անձերուն համար աղօթք ըրէք , որ Աստուած լուսաւորէ ձեր մտքերը՝ որ Սուրբ Գրքերը հասկընաք , որոնք կարող են ձեզ իմաստուն ընելու փրկութեան համար . և որ կարենաք ճանչել մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսին շնորհքովն ու գիտութիւնովը , որով միայն կրնաք փրկուիլ . որպէս զի վերջին օրը երբոր գայ Հովուապետն Յիսուս իր ոչխարները ժողվելու , կարող ըլլաք ուրախութեամբ իր աջ կողմը կայնելու :

Դուք որ Տէրոջը բարի ծառայքն էք ,
Ու իր սուրբ անունն ձեր վրայ կը կրէք .
Հօտին բարեխնամ հովիւներն եղէք ,
Մատաղ գառնուկներն միշտ արածեցէք :

Ասէք թէ անոնց քաջ հովիւն ես եմ ,
Թէ և երկնից մէջ կը թագաւորեմ .
Զանոնք իմ գիրկս ժողվել կարող եմ ,
Գանոնք դիտառատ սիրով լցուած եմ :

Երբոր երկինքը տեղ մը պատրաստեմ ,
Ընդուարձ զանոնք հոն պիտի հրաւիրեմ .
Ամէնը գառնուկներս չիտակ ինձի գան ,
Իմ ընտրեալ հօտս հոն պիտի ժողվեմ :

Digitized by Google

## Դ. ԷՍՏՈՒՇՈՒՑ ՊԵՏՈՒ.

Ընիկայ ոչխարի պէս մորթողէն պա-
ղատեցաւ ։ եւ իր խուզողին առջեւը հառնող
կէսցող գառնուկի պէս՝ անանկ իր բերանը
չբացաւ ։ Գործ. Ը. 32 ։

Սուրբ Գրքէն աս խօսքը լսելով՝ գուցէ պատրաստ էք հարցնելու թնտոր որ ներքինին Փիլիպպոսին հարցուց թէ Որո՞ւն համար ըսուած է ասիկայ ։ Ո՞վ էր ան անձը՝ որուն աս անգթութիւնը ըրին ։ Հիմա մենք ալ Փիլիպպոսին պէս աս խօսքս բնաբան դնելով՝ ձեզի Յիսուսը քարոզենք ։

Այո՛, ո՛րդեակք, Յիսուս՝ ան մեղաւորաց բարեկամը, ձեր բարեգութ Փրկիչն էր, որ այսպէս անգթութեամբ մեռցուեցաւ ։ Սակայն պիտի հարցնէք թէ՝ Ինչո՞ւ համար մեռցուեցաւ, ի՞նչ չարութիւն ըրած էր ։ Ընիկայ մեղք մը գործած չէր, ո՛չ ալ իր բերնին մէջ նենգութիւն մը գտնուեցաւ ։ Ընիկայ սուրբ ու անմեղ էր, և մեղաւորներէն զատուած ։ Սակայն մեր մեղքերուն հա-



Digitized by Google

մար վերաւորուեցաւ, ու մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ։ Մենք ամէնքս ալ ոչխարներու պէս մոլորեցանք. ամէն մէկերնիս իր ճամբուն դարձաւ, և Տէրը մեր ամէնուն անօրէնութիւնը անոր վրայ դրաւ։

Ամէնօրհնեալն Աստուած սուրբ ու երջանիկ ըլլալու համար ստեղծեց մեզ. իսկ մենք պարզամիտ ոչխարներու պէս՝ խոտորեցանք դէպ ի մահն ու կորուստը տանող ճամբան։ Բոլոր մարդկային ազգը զԱստուած թողուցին, իր պատուիրանքները չպահեցին, և մահուան արժանացան։

Ա՛ս աղէտալի վիճակիս մէջ՝ մեր բարեգութ Փրկիչը Յիսուս տեսաւ որ կորսուելու վրայ էինք. ուստի բարի հովուի պէս իր կեանքը ոչխարներուն համար վատանդի մէջ դրաւ։ Ընիկայ յօժարեցաւ մեր մեղքերը խաչափայտին վրայ վերցնելու, ու մեր յանցանացը պատասխանատու ըլլալու՝ չուզելով որ մենք կորսուինք։ Ընիկայ գիտէր որ աս իր կամաւոր մահը հաճոյական զոհ մը պիտի ըլլար իր երկնաւոր Հօրը, որ չուզեր մէկու մը կորսուիլը։

Ուստի ըսաւ. Ահա կու գամ քու

Digitized by Google

կամքդ կատարելու ։ ով Աստուած ։ Այ որովհետև իրենները սիրեց ։ մինչև վերջն ալ սիրեց զանոնք. ։ և մինչև ի մահ սիրեց ։ Մտածեցէք՝ որդեակք ։ թէ ինչ չարչարանքներ քաշեց ձեզի համար ։ ձեր փրկութեանը համար ։ Անիկայ ոչխարի պէս մորթուելու տարուեցաւ ։ Երբոր մորթուելու տարուող անմեղ ոչխարներուն վրայով մտածելու ըլլաք ։ ձեր կաբեկցութիւնը կը շարժի և խիստ կը խրդճաք ։ ուրեմն կարելի՞ է որ ձեր Փրկչին չարչարանացը և մահուանը աղեղորմ պատմութիւնը կարդաք առանց տրտմութեան և կաբեկցութեան ։

Զանիկայ ծեծեցին ։ անոր գլուխը փշեղէն պսակ դրին ։ երեսներուն ապտակ զարկին ։ ու թուքին ։ զանիկայ ծաղր ըրին ու նախատեցին ։ ետքը երկու աւազակներու մէջտեղը խաչը հանեցին ։ աս ամէն բաները կրեց համբերող գառնուկի նման ։ որ մունջ կը կենայ իր խուզողներուն առջևը ։ երբոր իր կոնակին բուրդերը կտրեն ։ Երբոր զանիկայ նախատեցին ։ անոր փոխարէնը չնախատեց ։ իսկ իր անգութ սպանողները զինքը մեռցնելու ատեննին ։ ինքը ըսաւ ։ Հայր ։

Ընթաց լուսեթեամբ ծուռը է վիզը,
Ընդուքի դահիճին անձնատուր կ'ըլլայ։

Այսպէս էր անմեղ Պառնուկն Աստուծոյ,
Ընողորմ մարդոց հեռքը մատնուած.
Խաչին չարչարանքն կրեց անաժդոհ,
Ինդրեց թողութիւն զինքն սպաննողաց։

Այսպէս ցաւալի էր մահ մեր Հովուին,
Որ մեզ ոչխարներս մահէ ազատէ.
"Ընոնց՝ որ ինծի սիրով կը յարին,
Պիտի շնորհեմ անվերջ կեանք կ'ըսէ։

Ահա ես 'ի սէր իմ ոչխարներուս,
Մահուան մատնեցի իմ արիւն ու լոյսս.
Ընոնք որ ինծի հոս կը ծառայեն,
Երկինքն ինծի հետ կը թագաւորեն"։

---

## Զ. ԱՍՏՈՒԱԾՈՅ ՄԵՐ ՀԱՅՐԸ

Ո՛վ Հայր մեր՝ որ երկինքն է։
Մատթ. Զ. 9։

Արդեօք ամենամեծն Աստուած՝ որ ամէն բանի ստեղծողն է, և որ ամենաբարձր երկնից մէջ կը բնակի, հաւանութիւն պիտի տայ՝ որ զինքը Հայր անուանենք։ Այո. աստ է Յիսուս Քրիստոսին

Digitized by Google

մեզի սորվեցուցած խօսքը. Երբոր աղօթք կ'ընէք, ըսէք. Ո՛վ Հայր մեր՝ որ երկինքն ես։

Իմ ծաղկահասակ բարեկամներս, դուք ամէնքդ ալ սորված էք՝ Հայր մեր՝ որ երկինքն ես՝ ըսելը. բայց արդեօք ան ալ սորված էք թէ՝ ո՞վ է աս երկնաւոր Հայրը, և ինչ ըրած է ձեզի համար, և ինչ պէտք է որ ընէք իր որդիները ըլլալու համար։ Երբոր Հայր մեր՝ կ'ըսէք, ձեր ներսիդին անանկ զգացում մը ունիք, ինտոր պէտք է որդի մը դէպ ի իր գորովագութ հայրը ունենայ։ Կը ճանչնաք անոր յարգը, և կը զգաք մէկ սէր մը անոր վրայ, և զանիկայ բարկացընելնուդ համար տրտմութիւն մը, ու անոր հլու և հնազանդ որդիները ըլլալու յօժարութիւն մը։ Այսոնք են ան զգացումները՝ որ դուք ունենալու էք դէպ ի ձեր երկրաւոր ծնողքները, և անոնցմէ աւելին ալ դէպ ի ձեր երկնաւոր Հայրը։

Հիմա ձեզի ըսուցեմ, որդեակք, թէ որ աս ըսած կերպովս բնաւ աղօթք ըրած չէք, ամենևին աղօթք չըրածի պէս պիտի ըլլաք։ Միայն շրթունքներու շարժումով աղօթելը՝ աղօթք ընել չէ. ձեր աղօթք-

ներքը սրտանց պէտք է ըլլան ։ եթէ ոչ՝ աղօթքը չեն սեպուիր ։ Օրհնեալ Աստուծոյ նախատինք մըն է զինքը Հայր կոչելը առանց զինքը սիրելու ։ Թէպէտ անիկայ երկինքն է ։ բայց ձեզ կը տեսնէ ։ և գիտէ ամէն ինչ որ մտքերնուդ կ'անցընէք ։ ու ինչ որ կ'ըսէք ու կ'ընէք ։ ինչպէս որ լուսոյ մէջ՝ անանկ ալ մութ տեղը ձեզ կը տեսնէ ։

Ուրեմն սրդեակք ։ ալ օրհնեալ Աստուածը մի բարկացընէք՝ ձեր շքեղութիւններովը միայն անոր մօտենալով ։ որ ատեն սրտերնիդ անկէ հեռու է ։ Հիմա կուրնէ սկսելով՝ հնազանդ որդւոյ մը վայելուչ սիրով անոր պիտի չաղաղակէք իրրև ձեր երկնաւոր Հօրը ։ Ընիկայ մարգասէր և գթառատ Հայր մըն է ։ Ինչպէս որ հայր մը կը գթայ իր որդւոցը վրայ ։ նոյնպէս ալ անիկայ ձեր վրայ կը գթայ ։ Ձեր վայելած բոլոր բարիքները տուողը ինքն է ։ Հագցնիդ ։ և կերակրածնիդ իրմէ կ'ընդունիք ։ Ինքն է ձեզ հաղաքաւոր փորձութիւններէ պահողը ։ ձեր հիւանդութիւնները բժշկողը ։ և ձեզ գթութիւնով ու ողորմութիւնով պսակողը ։

Digitized by Google

Եւ ամէն բաներուն վրայ՝ իր սիրելին, իր ամենասիրելի Որդին խրկեց ձեզ փրկելու ու ազատելու համար, որ չկորսուիք, հապա յաւիտենական կեանք ժառանգէք։ Ձեր երկնաւոր Հայրը ձեզ այսպէս սիրեց, ու դուք զինքը պիտի չսիրէք։ Ձեր ամէն կարօտ եղած պիտոյքները աս գթառատ Հօրմէն խնդրեցէք, որդեակք, քանզի ան որ ագռաւի ձագերուն ձայնը կը լսէ՝ իրեն կանչած ատենին, անշուշտ ձեր ձայնն ալ պիտի լսէ, երբոր իրեն կանչէք։

Դուք կերակուրի պէտք ունիք։ Ընիկայ որ դաշտի անասունները կը կերակրէ, ձեզ ալ պիտի կերակրէ։ Հագնելու հանգերձի՞ պէտք ունիք։ Ընիկայ որ դաշտի շուշանը կը հագուեցընէ, ալ աւելի ձեզ պիտի հագուեցընէ։ Ձեր երկրաւոր ծնողքները մեռնելով ձեզմէ կը զատուին, բայց ձեր երկնաւոր Հայրը ըսաւ որ. Ինձ քեզ պիտի չթողում, ու անտես պիտի չընեմ։ Դա քեզ պիտի չմոռնամ։

Ահա աս է ձեր երկնաւոր Հօրը քաղցր բարբառը, հապա ձերը ի՞նչպէս պէտք է որ ըլլայ։ Ձի՞ որ թոլորովին հնազան-



Digitized by Google

դութեամբ և սիրով ըլլալու է։ Արդեօք տարակուսած՝ ինչ բռնելիքնիդ պիտի չը-գիտնաք։ Միթէ անոր աղօթք ընելը պիտի մոռնաք։ Աղէ՛, իր սիրելի որդւոցը պէս ըսէք իրեն. Ո՛վ Հայր մեր՝ որ երկինքն ես, քեզի շնորհակալութիւն կը մատու-ցանենք որ թող կու տաս աս քաղցր և բերկրալի անունովը քեզի կանչելնուս. քեզի պիտի գանք անանկ մէկ սիրով և յօժարութեամբ մը, ինտոր որ քու որ-դւոցդ կը վայլէ։ Մեծապէս կը վշտա-նանք ասանկ գորովագութ Հայր մը բաղ-կացընելնուս համար. կ՚աղաչենք՝ ներէ՛ մեր մեղքերն ու յիմարութիւնները։ Սուրբ ըլլէ մեզ, քանզի դուն սուրբ ես, և ողորմած, քանզի դուն՝ ո՛վ երկնաւոր Հայր, ողորմած ես։ Քեզի կը դիմենք մեր ամէն պիտոյքներուն համար, կե-ղակուրի համար ու հանգերձի համար. բայց ամէն բանէն աւելի կ՚աղաչենք ա-նանկ սիրտ մը տաս մեզի, որ քեզ ա-ւելի սիրենք, և քեզի աւելի աղէկ ծա-ռայութիւն ընենք, որով կարող ըլլանք քու երկնային թագաւորութեանդ մէջ յաւիտեան հետդ քեզի բնակելու։

Digitized by Google

Երկնից Աստուածն որ կը պաշտենք,
Մեզ բարեկամ ու Հայր ալ է.
Ուր ուխտն իրեն հատուցանենք,
Որ աղօթքնիս ալ վերը ելլէ։

Մեր սիրտն իրեն կամաւ զոհենք,
Ինքն աղօթքնուս խիստ կը հաճի.
Իր սէրն անհուն դիշերն յիշենք,
Ինչ որ ինքը միշտ փառաւորի։

Երբ Աստուծոյ դէմ մեղանչենք,
Իր քաւիչ սէրն լալով խնդրենք.
Մեզի համար մեռաւ Յիսուս,
Ազատենք ուրիշ փրկիչ մը մենք։

Լմնցած հօր պէս սիրով վառած,
Մեղայ ներողն ինք կ'ողորմի.
Ինչ հոս ծնողքէ եմք զրկուած,
Մեզ Հայր անմահ ունիմք յերկնի։

---

Digitized by Google

## Զ. ՍԷՐ ԵՒ ԷՍՏՈՒԵՆՕ

Յիսուս քահանայապետ. Քո՛ Տէր Աստուածդ պիտի երկնչիս եւ քոյոր պարեդ, և եւ քոյոր անչեդ, և եւ քոյոր հրամանեդ։ Աստուածդ ես հեծիր ու ապաստանիս պատուիրանիդ։ Մատթ. իբ. 37, 38։

Այս յիրաւի ուրդեակք, ասիկայ ձեր սորվելու դասերուն առաջինը պէտք է ըլլայ։ Սակայն աւելի յարմար ժամանակ չէք կրնար գտնել ձեր Տէր Աստուածը սիրելու։ Իր ձեզի ցուցուցած ողորմութիւնները ձեր ծնանելէն ի վեր կը սկսին։ Զանոնք կրնա՞ք համրել. անոնք ծովեզերքի աւազէն աւելի անթիւ են։ Ամէն առտու կը ծաղկին, և ամէն իրիկուն կը նորոգուին։ Պէտք է որ սիրէք զանիկայ, քանզի ան է ամենամեծ և ամենաբարի Լաւը, ողորմութեանց Հայրը և բոլոր շնորհաց Աստուածը։ Անիկայ ամենուն բարի է, իր գթած ողորմութիւնները իր բոլոր գործքերուն վրայ է։ Պէտք է որ սիրէք զանիկայ. քանզի այնչափ սիրեց աշխարհը, որ մինչև անգամ իր միածին

Որդին տուաւ ։ որպէս զի ո՛վ որ անոր հաւատայ ։ չկորսուի ։ հապա յաւիտենական կեանք ժառանգէ ։

Տէրոջը աչքերը արդարներուն վրայ են ։ ու անոր ականջները անոնց աղաղակին ։ Ո՛հ ։ համը առէք ու տեսէք որ Տէրը բարի է ։

Հարուստն ու աղքատը ։ ծերն ու երիտասարդը՝ ամէնքն ալ կրնան աս պաշտօնիս մասնակից ըլլալ ։ Թո՛ղ հարուստը սիրէ զանիկայ . ինչու որ ան է իրենց ամէն բան տուողը ։ որ առատապէս վայելեն ։ Թո՛ղ աղքատը սիրէ զանիկայ . քանզի գրուած է . Աղքատը կ՚աղաղակէ ։ և Տէրը կը լսէ անոր ։ և զանիկայ իր ամէն նեղութենէն կը փրկէ ։ Թո՛ղ ծերը սիրէ զանիկայ . ինչու որ ան է իրենց օրերուն երկայնութիւնը ։ Թո՛ղ երիտասարդը սիրէ զանիկայ . ինչու որ ան է իրենց մանկութեան առաջնորդը ։ Սիրեցէք Տէրը ։ ո՛վ իր բոլոր սուրբերը ։

Ինքը ձեզի այսպէս բարիք կ՚ընէ ։ և ամենուն ալ ։ ու դուք զինքը պիտի չսիրէք ձեր բոլոր անձովը և ձեր բոլոր մտքովը ։ Ամէն բանէն աւելի սիրեցէք զանիկայ . Թո՛ղ անիկայ ձեր սիրոյն մէջ

առաջին տեղն ունենայ : Եմէն անգամ մոռացեցէք Աստուծոյ վրայ . առատութեանց արթնցած ատեններդ , և գիշերը պառկելու ատեններդ անոր վրայով մոռացեցէք . նոյնպէս ալ ըրէք դուրս ելած ատեններդ ու ներս մտած ատեններդ : Թող ան ամէն շնորհքները՝ որ օրէ օր ընդունելու վրայ էք , ձեր սիրտը շնորհապարտութեամբ դէպ 'ի անոր առաջնորդեն , որով ալ աւելի սիրէք զանիկայ , և աւելի աղէկ ծառայութիւն ընէք անոր :

Եւ թէ որ ձեր բոլոր սրտովը զԱստուած սիրէք , անոր աղօթք ընելու և զանիկայ փառաւորելու փափաք ալ պիտի ունենաք . և Դաւիթին հետ պիտի ըսէք . Ո՞վ ունիմ ես երկինքի մէջ քեզմէ ի զատ . երկրի վրայ ալ քեզմէ ուրիշը չեմ ուզեր : Ո՛վ Տէր , քու երեսիդ լոյսը իմ վրաս ծագէ . և սիկայ ցորենի ու գինիի առատութենէն աւելի ուրախութիւն պիտի պատճառէ իմ սրտիս : Քու սրահներուդ մէջ մէկ օրը՝ հազարքէն աղէկ է : Աւելի ընտրեցի իմ Աստուծոյս տանը շէմին վրայ կենալ , քան թէ ամբարշտաց և չարագործաց բնակարաններուն մէջը բնակիլ :

Digitized by Google

Ահա սոնք են բարեպաշտ անձանց խօսքերը, որոնք զԱստուած կը սիրեն ամէն բանէն աւելի։ Ու թէ որ դուք ալ այսպէս սիրէք զԱստուած ձեր բոլոր սրտովը, զանիկայ բարկացընելուդ համար պիտի չվշտանաք։ Դուք որ ձեր բարեգութ ծնողքները կամ ձեր սիրելի բարեկամները կամաւ բարկացընել չէք ուզեր, որչափ աւելի պիտի չուզէք մեղանչել ան Աստուծոյն դէմ, որ միշտ ձեզի բարիք կ'ընէ։ Թէ որ զիս կը սիրէք, կ'ըսէ Յիսուս Քրիստոս, իմ պատուիրանքներս պահեցէք։

Այսպէս որդեակք, Աստուծոյ վրայ ունեցած սէրերնիդ պէտք է որ ցուցընէք։ Ու թէ որ ձեր բոլոր սրտովը սիրէք զանիկայ, միշտ անոր հաճոյ եղածը ընելով պիտի ուրախանաք, ամէն բանի մէջ ձեր պարտաւորութիւնը պիտի կատարէք. քանզի ան է Աստուծոյ հաճելին։

զԱստուած սիրելը, և զանիկայ փառաւորելը բուն երկինքին գործը պիտի ըլլայ. և թէ որ կ'ուզէք երկինքի արժանաւոր ըլլալ, աս բերկրալի գործը հոս երկրի վրայ պէտք է սկսիք։ Ընկալելի է որ երկինքը երթալու փափաք ու-

նենաք՝ առանց զԱստուած սիրելու. քանզի հոն սուրբերն ու հրեշտակները ցորեկ ու գիշեր անդադար կը գովաբանեն զանիկայ, ըսելով. Սուրբ, սուրբ, սուրբ է ամենակարող Տէր Աստուածը։

Թէ որ հոս Աստուծոյ աղօթք ընելու, և անոր փառափանութիւն մատուցանելու սէր ունենաք, ուրախ սրտիւ պիտի խորհրդածութիւն ընէք ան աշխարհին վրայով, ուր որ աւելի պիտի սիրէք զանիկայ, և արժանաւոր կերպիւ գոհութիւն պիտի մատուցանէք անոր, ուր որ բնաւ մեղաց փորձութեան մէջ պիտի չէյնաք. այլ յաւիտեան պիտի սիրէք զանիկայ, ու անոր ծառայութիւն պիտի ընէք. և ուր որ Աստուած պիտի բլլայ ամէնը՝ ամենուն մէջը։

Դուք որ Տէրը կը սիրէք,
Աշտարակաձև խայտացէք.
Աթոռին քով պար առեալ,
Բաղդը երգով օրհնեցէք։

Անոնք որ Տէրն կը մերժեն,
Աստուած բնաւ չեն ճանչցած.
Աբքայութեան որդիքն են,
Ու կը յիշեն միշտ զԱստուած։

Digitized by Google

Ասկէ շնորհաց որդիներն ,
Փառք վայելել կը սկսին .
Հոս երկնաւոր պտուղներն ,
Յուսով հաւատքով կ'ուտին :

Դեռ երկնից դաշտն չհասած ;
Ոսկի փողոցներն չելած .
Միօրի լեռն կը բուրէ ,
Էխորժելի հոտ ծաղկանց :

Երդ՝ մենք երգով Տէրն օրհնենք ,
Խոր արցունքներս դադարի .
Վերին քաղաքն որ կ'ելլենք ,
Յամենաւելին կը կոչուի :

---

## Ի . ԵՌԵՆՉԵՆԵՍԵՆ ԵԼՕԹՔ

Դուռն երբեմն աղօթիւ կ'ընէաս , մտիր տուն սենեակդ ու գոցէ դռներդ , և աղօթիւ ըրէ տու Հօրդ գաղտնի . և տու Հայրդ որ գաղտնիքը կը տեսնէ , դէպքէ յայտնապէս հատուցում պիտի ընէ :
Մատթ . Ղ . 6 :

Ո՛րդեակք՝ թէ որ իրաւցընէ ամէն բանէն աւելի կը սիրէք զԱստուած , թէ որ անիկայ է ձեր Հայրը՝ ձեր երկնաւոր



Digitized by Google

Հայրը, ուրեմն անոր աղօթք ընելիդ անշուշտ ձեր սրտին մեծ բերկրութիւն մը պիտի բլլայ. անոր ըսելու, և անկէ խնդրելու բաներնիդ շատ է. և շնորհակալ բլլալու ալ շատ բան ունիք։

Դացէք ուրդեակք՝ եթէ կարելի է, անանկ տեղ մը՝ ուր որ մէկը չկրնար ձեզ տեսնել, բայց միայն Աստուած՝ ձեր երկնաւոր Հայրը, և հոն ձեր սրտերը բացէք անոր առջեւն, բոլոր ուրդիական հնազանդութեամբ և սիրով. ըսէք իրեն թէ ուրչափ կը սիրէք զինքը՝ իր ձեզի ըրած բոլոր բարիքներուն համար. և թէ աւելի կը փափաքիք իր շնորհքը, իր երեսին լոյսը վայելել, քան թէ ան բոլոր բարիքը որ աշխարհս կրնայ ձեզի տալ։

Իրեն ըսէք թէ մեծապէս կը վշտանաք որ ձեր փոփոխական սրտերը մանկական հասակին անմտութիւններուն ու ունայնութիւններովը զբաղած բլլալով՝ դիւրաւ կը մոռնան զինքը. թէ շատ անգամ իրեն աղօթք՝ կ՚ընէք առանց ակնածութեան, սիրոյ և յոժարութեան, որ ձեզի պէտք էր միշտ ան զգացումները ունենալ. թէ շատ անգամ իր սուրբ խօսքը անփոյթ և անհոգ կերպով կը կարդաք, իբր թէ

Digitized by Google

մարդու խօսք եղած ըլլային անոնք, և ոչ թէ Աստուծոյ, և թէ անոր միջոցովը աւելի սուրբ ու բարի եղած ալ չէք։

Ողբացէք ան հպարտութեանը, կամակորութեանը, և ապականութեանը համար, որ ատեն ատեն կը զգաք ձեր սրտերուն մէջ, և որ քիչ անգամ աս մեղքերուն դէմ կը դնէք, որ պէտք էիք յաղթել ու նուաճել։

Այսպէս ձեր բոլոր մեղքերուն ու անմտութիւններուն համար խոնարհեցէք Աստուծոյ առջեւն, խնդրելով որ Քրիստոսի սիրոյն համար բարեհաճի անոնց ամենուն ներել, և շնորհել ձեզի իր Սուրբ Հոգին, որուն օգնականութեամբը կարենաք աւելի սիրել զինքը, և աւելի ազէկ ծառայութիւն ընել իրեն։

Ազէկ է՝ որդեակք, Աստուծոյ մօտենալ, առատանց իր ողորմութիւնը պատմել, և ամէն գիշեր իր հաւատարմութիւնը։ Ամէն օր աս ուրախալի պաշտօնը սկսեցէք։ Ինչուշտ անկարելի բան է առտուանց աղջ առողջ արթննալ, բարեկամաց տեսութիւնը, և կենաց ամէն հարկաւոր եղած բարիքները վայելել, առանց շնորհակալութիւն մատուց-

ցանելու ողորմութեանց Աստուծոյն ։ որ ամէն բան առատապէս կու տայ վայելելու։

Զըլլայ որ յանդգնութիւն ընէք օրուան վտանգներուն ու փորձութիւններուն մէջ մտնելու ։ առանց աղօթքով խնդրելու որ Աստուած ձեր հետը ըլլայ՝ ձեզ մեղքէ պահելու ։ և ձեզ չարէն ազատելու համար ։ Անկարելի պիտի ըլլայ անշուշտ դիշերն ալ խաղաղութեամբ պառկիլ ։ առանց շնորհակալ ըլլալու ան մարդասէր ձեռքին ։ որ ձեզ չարէն պահեց ։ և իր ողորմութեամբը ։ ու քաղցր գթութեամբը օրը պսակեց ։ և առանց ձեր երկնաւոր Հօրմէն թողութիւն խընդրելու սխալմամբ ըրած ձեր ամէն բաներուն համար ։ Սանկով կրնաք ձեր անձը իր խնամոցը յանձնել և գիշերային փորձութիւններէ ապահով ըլլալ ։ քանզի մի միայն Աստուած կարող է ձեզ ապահովութեան մէջ բնակեցընելու ։

Այսպէս ուրդեակք ։ ձեր երկնաւոր Հօրը հետ կրնաք գաղտուկ խօսակցիլ ։ և հոգ մի՛ ընէք ։ քանզի ան որ ապառաւի ձագերուն ձայնը կը լսէ ։ երբոր իրեն կ՝աղաղակեն ։ անշուշտ ձեզի ալ մտիկ պիտի ընէ ։ երբոր իրեն աղօթէք ։ ամի-

կայ գաղտուկ կը տեսնէ զինքը սիրելու ու իրեն ծառայելու համար ձեր սրտին ունեցած ամենատկար բաղձանքը. անի-կայ պիտի յիշէ ձեր մանկական սէրը, և ձեզի յայտնապէս հատուցում պիտի ընէ։ Մի՛ վախնաք, որդեակք, թէ և ձեր աղօթք ըրած տեղերնիդ մութ անկիւն մը՛ն ալ ըլլայ, ձեր երկնաւոր Հայրը անկէ ալ ձեզ պիտի տեսնէ։ Մի՛ խռովիք թէ և ձեր ընկերները վրանիդ խընդան՝ ձեր աղօթքները ճշդութեամբ ընելնուդ համար. մտքերնիդ բերէք որ ձեր երկնաւոր Հայրը կը տեսնէ, երբոր դուք ամչնաք, կամ քաշուիք իրեն աղօթք ընելէն։ Դ. Յիսուս կ'ըսէ. "Ո՛վ որ զիս ու իմ խօսքերս ամօթ կը սեպէ, Որդին մարդոյ ալ անիկայ ամօթով պիտի ընէ՝ երբոր իր ու իր Հօրը փառքովը գայ սուրբ հրեշտակներուն հետ"։ Այլ "Ո՛վ որ մարդոց առջևը զիս կը դաւանի, Որդին մարդոյ ալ զանիկայ պիտի դաւանի Աստուծոյ հրեշտակներուն առջևը"։

Հաւատացէք որդեակք՝ ձեր աղօթքները պարապ պիտի չելլեն. անիկայ աստուածարհիս մէջ ձեզի հատուցում պիտի

ընէ իր ձեզի համար աղէկ սեպած ամէն բաներովը. ու վերջին օրը՝ անիկայ ձեզի յայտնապէս հաստուցում պիտի ընէ մարդոց և հրեշտակաց առջևը։

Ընն մեծ պատուէրն սրդեակ սորվէ,
Որ Տէր Աստուածդ սիրես՝ կ'ըսէ.
Խոլոր սրտով բոլոր մտօք,
Օ՛ինքը սիրէ, երդով գովէ։

Պատաղատունկ հասակիդ մէջ,
Կեանքդ սիրով Թող պակուի.
Խոլոր բարիքդ աս կեանքիս մէջ,
Ցեղի վերէն պիտի շնորհուի։

Սրտիդ խորհուրդն առաւօտուն,
Ցիու ըստեղծչիդ վրայ ըլլան.
Եղնպէս առ վեհ խնամածուն,
Ցիու մոածմունքդ երեկոյեան։

Մանկանց ձայնէն ինք կ'ախորժի.
Իր սուրբ երեսն խնդրել կ'ուզէ.
Ո՛վ իր սիրոյն համատ որդի,
Իր խոստացած շնորհքըն խնդրէ։

---

Digitized by Google

## Ը. ՄԻ ՄԻԵՅՆ ԱՆԵՐԿԵՒՈՐ ՈՒՆԻՐ

**Մէկ բան մը պէտք է։ Ղուկ. Ժ. 42։**

Այս խօսքը լսելնէդ ետև՝ որդեակք, անտարակոյս մեծ փափաք պիտի ունենաք աս մի միայն հարկաւոր բանին ինչ ըլլալը գիտնալու։ Աստիկայ Յիսուս Քրիստոսին խօսքն է. և հիմա ձեզի պիտի պատմեմ թէ ինչ պատեհութեամբ զըրուցած է։

Երբոր Յիսուս մարդկային սեռին բարիք ընելու կը պտըտէր, գեղի մը մէջ մտաւ. ուր Մարթա անուանով կին մը մարդասիրութեամբ իր տունը ընդունեց զանիկայ։ Այս Մարթան Մարիամ անուանով քոյր մը ունէր, որ Յիսուսի ոտքերուն քովը նստաւ, ու անոր խօսքերը մտիկ կ'ընէր։ Իսկ Մարթա շատ պատրաստութիւն տեսնելու մէջ զբաղած էր, ու եկաւ՝ Յիսուսին ըսաւ. Տէր, քու հոգդ չէ՞, որ իմ քոյրս զիս միանակ թողուց սպասաւորութեան մէջ. ուստի ասոր զրուցէ որ ինծի օգնէ։ Եւ Յիսուս պատասխանեց՝ ու ըսաւ. Մար-

Digitized by Google

թա, Մարթա, դուն կը հոգաս՝ ու շատ բաներով զբաղած ես. բայց մէկ բան մը պէտք է. և Մարիամ ան աղէկ բաժինը ընտրեց, որ իրմէն պիտի չառնուի։

Եւ հիմա՝ որդեակք, աս պատմութենէս կրնաք սորվիլ թէ ինչ է ան մի միայն հարկաւոր բանը։ Ընիկայ յաւիտենական կենաց խօսքը լսել, և հարցուփորձ ընելն է՝ թէ ինչ պէտք է որ մէկը ընէ փրկուելու համար։ Եւ թէ պէտ հիմա չէք կրնար անոր ոտքերուն քովը նստիլ, ինչպէս որ Մարիամ ներստեր էր՝ անոր աշխարհիս վրայ եղած ատենը, սակայն կրնաք անոր երթալ խոնարհ աշակերտի մը պէս։ Մարիամին նման անոր խօսքերը մտիկ ըրէք, և ձեր հոգիներուն հարկաւոր եղած բաներուն ուշադրութիւն ըրէք. և Մարիամին պէս ընտրեցէք ձեզի ան աղէկ բաժինը, որ քնաւ ձեզմէ պիտի չառնուի։

Աստուածպաշտութիւնը մարդուս մի միայն հարկաւոր բանն է. քանզի առանց անոր՝ չէք կրնար երջանիկ ըլլալ աս աշխարհիս մէջ, և գալու աշխարհին մէջն ալ յաւիտեան թշուառ պիտի ըլլաք։

Ընիկայ ամենուն ալ հարկաւոր է.

Digitized by Google

թէ հարուստին և թէ աղքատին, թէ ծերին և թէ երիտասարդին։ Ձեզի հարկաւոր է՝ որդեակք, որ զԱստուած ճանչնաք, և անոր ծառայութիւն ընէք՝ քանի որ երկրիս վրայ էք, ու ետքը ա-նոր հետ երկինքին մէջ բնակիք, ու յա-ւիտեան երջանիք ըլլաք։ Անիկայ հա-րըստութենէ, պատիւէ, և ամէն աշ-խարհային բաներէ աւելի հարկաւոր է ձեզի. քանզի ի՞նչ օգուտ կ'ըլլայ ձեզի թէ որ բոլոր աշխարհը վաստըկիք, ու ձեր հոգին կորսնցընէք։

Յիսուս Քրիստոս չէ թէ մի միայն հարկաւոր բանը կ'անուանէ աստուած-պաշտութիւնը, այլ և աղէկ բաժինը ա-սիկայ կ'անուանէ։ Այս՝ որդեակք, ա-ղէկ բան է զԱստուած ու Քրիստոս սի-րել. բարեպաշտութեան ճամբաները՝ ա-խորժելի ճամբաներ են, և անոր բոլոր շաւիղները խաղաղութիւն են։ Աստու-ծոյ օրէնքը սիրողները մեծ խաղաղութիւն կը վայելեն։ Աստուծոյ աղօթք ընելը, ու զանիկայ գովաբանելը, այսինքն իր ողորմութիւնը առտուանց, և իր հա-ւատարմութիւնը ամէն գիշեր պատմելը ուրախալի գործ մըն է։



Digitized by Google

Աստուածպաշտութիւնը աղէկ բան է. քանզի մեզի կը սորվեցնէ բարի ըլլալ, և ամէն մեր բոլորտիքը եղողներուն ալ բարիք ընել։

Աստուածասէր տղան բարի տղայ կ'ըլլայ. անիկայ իր ծնողացը կը հնազանդի, չէ թէ միայն զանոնք սիրելուն համար, հապա Աստուծոյ պատուէրին համար ալ, որ կ'ըսէ. Պատուէ՛ քու հայրդ ու մայրդ. այլ և Յիսուս Քրիստոսի պատուէրին համար ալ, թէ՝ Ո՛րդեակք՝ ամէն բանի մէջ ձեր ծնողացը հնազանդ եղէք։ Ընանկ տղան ողորմած ու գթած կ'ըլլայ. ինչու որ իր երկնաւոր Հայրը ողորմած ու գթած է ամենուն. ժրաջան և աշխատասէր կ'ըլլայ. ինչու որ իր Աստուածաշունչը իրեն կ'ըսէ թէ, գործի մէջ ծոյլ չըլլայ, հապա հոգւով բորբոքած, Տէրոջը ծառայելով։ Համառօտիւ ըսելով՝ անանկ մէկը բարի տղայ մը կ'ըլլայ, որ Աստուծոյ որդի ըլլայ, և զԱստուած իրեն հայր ու բարեկամ ունենայ յաւիտեան։ Ուրեմն իմ ծաղկահասակ բարեկամներս, ասիկայ աղէկ բան մը չէ՞, որ ձեզ այսպէս բարի ու երջանիկ պիտի ընէ։

Digitized by Google

Յիսուս ըսած է որ՝ աս աղէկ բաժինը բնաւ ձեզմէ պիտի չառնուի. ձեր ծնողքներն ու բարեկամները մահուան միջոցով ձեզմէ պիտի վերցուին. բայց թէ որ դուք բարի ըլլաք, Աստուած ձեր հայրն ու բարեկամը պիտի ըլլայ յաւիտեան։ Արնայ ըլլալ որ ձեր հարստութիւնը կորսուի, բայց թէ որ դուք բարի ըլլաք, աւելի աղէկ գանձեր կ'ունենաք երկինքի մէջ։ Բուն իսկ մահը կարող չէ աս աղէկ բաժինը ձեզմէ մէկդի առնելու. քանզի Յիսուս յաղթեց մահուան, և իր բոլոր հաւատարիմ հետևողներուն յաւիտենական կեանք պիտի պարգևէ։

Այս հիմա՝ որդեակք, ալ ասկէ աւելի ի՞նչ կրնամ ըսել որ ձեզ համոզեմ աս աղէկ բաժինը ընտրելու։ Բարեպաշտ մարդիկը ձեզի կ'ըսեն թէ՝ ան է աղէկ բաժինը. իրենք այնպէս ըլլալը փորձով իմացեր են, և ամէն բանէն աւելի՝ կը փափաքին որ ձեր ալ ան նոյն բանը ընտրելուն ականատես ըլլան։ Յիսուս կ'ըսէ թէ՝ ան է աղէկ բաժինը. ուրեմն իրեն գացէք, իր ոտքերուն քովը նստէք, ու ըսէք իրեն։ Օրհնեալդ Յիսուս՝ քեզմէ ի՛ զատ որո՞ւ

պիտի երթանք մենք • դուն յաւիտենա-
կան կեանքի խօսքեր ունիս • սորվեցուր
մեզի թէ ինչ պէտք է ընել որ փրը-
կուինք • սորվեցուր մեզի ան մի միայն
հարկաւոր բանը • Մարիամին սորվեցու-
ցածիդ պէս՝ մեզի ալ սորվեցուր ընտ-
րել ան աղէկ բաժինը որ բնաւ մեզմէ
պիտի չառնուի ։

Դուք որ տարօք և դիտութեամբ տղայ էք ,
Աստուածային սուրբ կրօնին պէտք ունիք •
Մրչափ փոքր էք , դեռ մահուանէ ազատ չէք ,
Ձեր գործոյը համար՝ հաշիւ տալ պարտիք ։

Ձեր նորատունկ թարմ հասակին կը վայլէ ,
Յիշել զԱստուած , որն որ սերտիւ կը սիրէք •
Օ՛ինքն հոս պաշտել երկրպագել արժան է ,
Որ երկնից մէջ իր տեսութիւնն վայելէք ։

Ընդ փութով փրկչին ոտից քով նստէք ։
Իր խօսքերուն ականջնիդ բաց ուշ դրէք •
Իրմէ սորվիք աղէկ բաժինն ձեզ ընտրել ,
Օ՛ր անկարուստ աւանդի պէս ձեզ պահէք ։

Digitized by Google

## ԹԻ. ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Եւ ան պէտք հովանաւորի կայնի քաջը կեցցած , որոնք իրենց հօրերուն գիրքերուն պահպանումը կ'ընեին : Ո՞ Տէրոջը հրեշտակը երկնաւոր անոնց , և Տէրոջը փառքը անոնց վրայ ծագեցաւ . ու խիստ լաւ վախցան : Եւ հրեշտակը ըսաւ անոնց . Մի՛ վախնաք , ինչու որ ահա՛ ես ձեզի հոգ ուրախանալու աւետիս կուտամ , որ բոլոր ժողովուրդին պիտի ըլլայ . վասն զի ձեզի այսօր Փրկիչ մը ծնաւ Դաւթի քաղաքին մէջը , որ ինքը Օծեալ Տէրն է : Եւ սա ձեզի նշան մը ըլլայ . մանուկ մը պիտի գտնէք խանձարուրով փաթթուած , ու մսուրի մէջ դրուած : Եւ իսկոյն ան հրեշտակին հետը երկնային զօրաց բազմութիւն մը եղաւ , որոնք գովեստ կ'օրհնէին՝ ու կ'ըսէին . Երկինքց բարձրութիւնը մէջ Աստուծոյ փառք , ու երկրի վրայ խաղաղութիւն , մարդերէնէրուն հաճութիւն :

Ղուկ . Բ . 8—14 :

*Ա՛վ որդեակք , ինչպէս որ հովիւներուն՝ նոյնպէս ալ ձեզի խրկուեցաւ ա-*

Digitized by Google

ուրախարար աւետիսը. ձեզի համար Փրկիչ մը ծնաւ, այսինքն Քրիստոս Տէրը։ Իր անունը Յիսուս կոչուեցաւ, քանզի իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէր։

Ու յիրաւի ասիկայ ուրախալի լուր մը չէ՞, որ Յիսուս՝ Աստուծոյ սիրելի Որդին երկինքէն վար իջնէ, ու մեր նը-մանութիւնովը տկար մանուկի մը պէս աշխարհք գայ, մեր մեղքերէն մաղ փրկելու համար։ Ու կը տեսնէք որ ոչ միայն երկրի վրայ, այլև երկինքի մէջ ալ ուրախութիւն կար. սուրբ հրեշտակները՝ ան բարեսէր էակները ուրախութեամբ աս բարի լուրը մարդոց կ'աւետէին։

Հրեշտակները աս լուրը հովիւներուն ալ տալուն պէս, մէյմէն ալ յանկարծ անոր հետ երկնաւոր զօրաց բազմութիւն մը տեսնուեցաւ, որոնք զԱստուած կ'օրհնէին՝ ըսելով. Երկնից բարձրութեանը մէջ Աստուծոյ փառք։ Անոնք կը փառաւորէին զԱստուած, որ աշխարհս շատ սիրելուն համար՝ մինչև անգամ իր միածին Որդին տուաւ, որպէս զի ով որ անոր հաւատայ, չկորսուի, հապա յաւիտենական կեանք ժառանգէ։

Digitized by Google

Ընոնք երկրիս վրայ խաղաղութիւն կ'երգէին ։ Յիսուս՝ խաղաղութեան Իշխանը եկած էր երկրիս վրայ խաղաղութիւն բերելու . մեղապարտ մարդիկը ամէնօրհնեալ Աստուծոյ հետ հաշտեցընելու , որն որ բարկացուցեր էին իրենց մեղանչելովը . մարդոց աստուածսիրութիւն և ընկերասիրութիւն սորվեցընելու . որպէս զի կարենան Աստուծոյ և իր սուրբ հրեշտակներուն հետ յաւիտեան երկինքին մէջ բնակելու յարմարութիւն ունենալ ։

Ա՛ս սուրբ ու երանելի հոգիները մեղքին , չարութեան , ատելութեան , և հակառակութեան տեղ՝ մարդոց մէջ արդարութիւն , խաղաղութիւն և խնդութիւն տեսնելով , մեծապէս կ'ուրախանային ։

Ընոնք մարդիկներուն հաճութիւն կ'երգէին ։ Երբոր առաջ մարդս ստեղծուեցաւ , սուրբ հրեշտակները՝ ան առաւօտեան աստղերը մէկտեղ փառաբանութիւն կ'ընէին և կ'ուրախանային . իսկ երբ տեսան որ մարդը իր Արարչին դէմ ապստամբեցաւ , և մահուան դատապարտութիւն ընդունեց , իրենց ուրախու-

թիւնը տրտմութեան փոխուեցաւ։ Սակայն երբ տեսան որ անիկայ Աստուծոյ շնորհքն ու սէրը և իր կորսնցուցած սուրբ ու երջանիկ վիճակը նորէն ձեռք բերաւ, նաև Սատանային՝ այսինքն Աստուծոյ և մարդոց մեծ թշնամւոյն գործքերը ջնջուեցաւ, և դարձեալ երկրիս վրայ խաղաղութիւն հաստատուեցաւ, անատենը իրենց ուրախութիւնը նորոգուեցաւ։

Ընդ՝ այնք կ՚ուրախանային, մտածելով որ բարի մարդիկ արևելքէն ու արևմուտքէն՝ աշխարհիս ամէն կողմերէն պիտի գան, և իրենց հետ յաւիտեան երկինքը պիտի բնակին։ Բարեսէր հրեշտակները շատ անգամ՝ խրկուած էին հոս երկրիս վրայ եղող բարի մարդիկներուն սպասաւորելու. բայց երբէք այսչափ ուրախութիւն չէին ունեցեր, որչափ որ աս պատեհութեամբս եկած ատենին ունեցան։ Ասիկայ բոլոր աշխարհին բարի լուր մըն էր. մեծ ուրախութեան աւետիս մը բոլոր ժողովուրդին, հարուստին ու աղքատին, ծերին ու երիտասարդին. քանզի ամէնքն ալ՝ աս փրկչին պէտք ունէին։

Այո՛ որդեակք, աս փրկութիւնը ձեզի խրկուած է։ Դու դուք անիկայ ուրախու-

թեամբ պիտի չընդունիք։ Տաճարին մէջ տղոցը հետ պիտի չաղաղակէք՝ ըսելով. Ովսաննա. օրհնեալ է ան՝ որ Տէրոջը անունովը մեզի կու գայ։ Սուրբ հրեշտակաց հետ ձայնակից պիտի չըլլաք՝ ըսելով. Երկնից բարձրութեանը մէջ Աստուծոյ փառք, երկրի վրայ խաղաղութիւն, մարդիկներուն հաճութիւն։ Անոնք զԱստուած կը փառաւորեն ձեր վրայ ունեցած սիրոյն համար, և դուք լռեա պիտի կենաք։ Անոնք ձեր փրկութեանը ակնկալութիւնով կ'ուրախանան, և դուք մեղքէն ու դժոխքէն փրկուիլ՝ ու երկինքը յաւիտեան սուրբ հրեշտակաց հետ բնակիլ չպիտի՞ ուզէք։

Ի՞նչ բերկրալի բան է երբոր մտածենք թէ սուրբ հրեշտակները հոս երկրիս վրայ մեր սպասաւորութեանը համար կը գործածուին. բայց յաւէտ բերկրալի բան է, երբոր մտածենք թէ երկնից մէջ Աստուծոյ և Փրկչին գովաբանութիւնները անոնց հետ միաձայն պիտի երգենք։

Անատեսը Աստուծոյ փառաբանութիւնը ալ աւելի եռանդեամբ բարձրաձայն պիտի երգենք, քան որչափ հոս երկրիս վրայ կ'երգէինք։ Ո՞ն ան օրհնեալ հո-



Digitized by Google

գիներուն հետ պիտի ընկերանանք ։ որոնք գիշեր ցորեկ անդադար կ'երգեն ։ ըսելով. Սուրբ՝ Սուրբ՝ Սուրբ՝ Տէր Աստուած Ամենակալ ։ որ էր ։ և է ։ և որ պիտի գայ ։ Ինատենը հազարաւոր հրեշտակներու հետ մէկտեղ պիտի ըսենք. Աստ մորթուած Գառնուկը արժանի է մեծութիւն առնելու՝ և իմաստութիւն՝ և զօրութիւն՝ ու պատիւ՝ և փառք ու օրհնութիւն ։

Ան որ աթոռը նստած է՝ և ան Գառնուկը օրհնեալ՝ բարձրացեալ և փառաւորեալ ըլլայ յաւիտեանս յաւիտենից ։

Երգեն սուրբ հրեշտակք փառք մեծ Աստուծոյ ։
Ինչպէս ամէն սիրտ փառք տայ գոհութեամբ ։
Որ արդարութեան ծագէց շող լուսոյ ։
Եւ խաղաղութիւն մարկէին ծննդեամբ ։

Երգեն սուրբ հրեշտակք մարդոց հաճութիւն ։
Ինչպէս ամէն մարդ գոչէ մեծաձայն ։
Որ կիրդի թող երթան ոխն ատելութիւն ։
Խաղաղութեան սէրն հաստատեսցեն միասն ։

Փառք մեծ Աստուծոյ՝ որ տուաւ իր Որդին ։
Ինչպէս մեղ մանուկ ։ որ մեր փրկիչն է ։
Ինչուամ հաշտութիւն բերէ երկնային ։
Որոյ ժողովուրդն կը կոչուայ յարէ ։

Digitized by Google

*Փրկչէն գալըտեանն որուն կը սպասուէր ,*
*Ընդ ոտերն ալ թմչ տեղ պատրաստեն .*
*Տղայքն ալ երդեն գոհութեան երգեր ,*
*Փրկիչ Աստուծոյն սէրը քարոզեն :*

---

## Յ. ՄԵՆԱԿԵՆՑ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԵՆԵՐԸ

Նրքեր փահանայապետները և դպիրները Յիսուսի ըրած հրաշքները տեսան , և հաներ տղայերը որ տաճարին մէջը կը կանչէին ու կ'ըսէին . Ովսանա որդւոյ Դաւթի , քաջալացան , ու ըսին իրեն . Կը լսէ՞ ինչ կ'ըսեն սոոնք . ըսաւ անոնց Յիսուս . Այո՛ , վէ՞ր կարդացէր , թէ Պսալմի տղոց ու կանչողներու բերանէն օրհնութիւն կատարեցիր : Մատթ . իա . 15 , 16 :

Աւետարանին սա նոյն գլխուն մէջ մեր Փրկչէն Երուսաղէմ մտնելուն հանդիսական պատմութիւնը ստորագրուած է . անիկայ չէ թէ երկրաւոր թագաւորի պէս իր զօրականներովը շրջապատած , և ոսկեղէն ու արծաթեղէն զարդերու պերճութեամբ կու գայ . հապա հեզութեամբ և խոնարհութեամբ , և իշու վրայ՝ ու իշու

աւանակի վրայ հեծած : Պետրոսը փռած ամենաշքեղ ծածկոցները՝ որոնց վրայէն կ'անցնէր Յիսուս , ծառերու ոստեր ու ժողովուրդին հանդերձներն էին . և ասոնք մեծագին գորգերէ աւելի կը յարմարէին իր խոնարհ երևոյթին : Յիրաւի ինքը թագաւոր մըն էր , թագաւորաց թագաւոր . բայց երկրիս վրայ երևցաւ իբրև թագաւոր միայն իր եկեղեցւոյն — իբրև թագաւոր իր սուրբերուն — իբրև թագաւոր Սիօնին :

Եւ Յիսուսի առջևէն ու ետևէն գացող բազմութիւնը կ'աղաղակէր՝ ըսելով . Ո՛վսանանա որդւոյ Դաւթի . օրհնեալ է ան՝ որ Տէրոջը անունովը կու գայ . ո՛վսանանա 'ի բարձունս : Աս գովութեան երգերը աւելի հաճոյական բաներ էին օրհնեալ Յիսուսին , քան թէ ան ամէն պատիւները որ կրնային անոր ընծայուիլ . անիկայ եկաւ , չէ թէ իր թշնամիներուն յաղթելու , հապա իր ժողովուրդին սրտերուն մէջ թագաւորելու . չէ թէ զանոնք իրենց թշնամիներէն ազատելու , հապա իրենց մեղքերէն փրկելու : Աս էր իր մարգասիրական պատգամաւորութիւնը , որուն համար ինքը մեզի եկաւ : Ժողո-

Digitized by Google

վուրդը իրաւունք ունէր՝ Ա՛վանտնա ա-
ղաղակելու. տղաքը իրաւունք ունէին
աս բարեդուրթ Փրկչին դովութեան եր-
գին ձայնակից ըլլալու. քանզի թէ որ
իրենք լռէին, անշուշտ քարերը պիտի
աղաղակէին ու իրենք ամօթով պիտի
մնային։ Ասիկայ իրենց պատիւ մըն էր,
որ Յիսուսին իր տաճարը գալը կ՚ողջու-
նէին, երբոր նոյն ատենը դպիրներն ու
քահանաները իրենց հպարտութեանը
համար՝ զանիկայ իրենց Փրկիչն ու իրենց
թագաւորը ճանչնալ չէին ուզեր։

Ասոնք տեսնելով Քրիստոսին ըրած
հրաշքները, և տաճարին մէջ տղոցը
աղաղակելը, որ կ՚ըսէին. Ա՛վանտնա որ-
դւոյ Դաւթի, խիստ բարկացան, ու
ըսին իրեն. Կը լսե՞ս թէ ի՞նչ կ՚ըսեն
ատոնք։ Յիսուս պատասխանեց ու ըսաւ
անոնց. Այո՛. չէ՞ք կարդացեր, թէ
Պզտիկ տղոց ու կաթնկերներու բերնէն
օրհնութիւն կատարեցիր։

Կը տեսնէք որ Յիսուս ամէն առիթ-
ներու մէջ տղոց վրայ իր ունեցած սէրը
ցուցընելու պատրաստ էր. չէր թողուր
որ դպիրներն ու քահանաները իր գո-
վութիւնները երգող տղոց բերանները

Digitized by Google

լուեցրնեն։ Սուրբ Գրոց մէջ գրուած էր որ, իր թագաւորութեանը գալուն անմոռաց պիտի ողջունէին զինքը. ուստի ինքն ալ ուրախութեամբ պզտիկ տղոց բերնէն ովսանններ լսել կ'ուզէր։

Ո՛րդեակք՝ ձեր Փրկչին գովութիւնները երգելու համար պզտիկ չէք. ուստի երբոր կը լսէք որ ուրիշները խնդութեամբ կ'ընդունին զանիկայ իբրև Որդի Աստուծոյ, և Փրկիչ մարդկան, դուք ալ ձայնակից ըլլալով՝ աղաղակեցէք. Ո՛վսանա՝ օրհնեալ է ան որ Տէրոջը անունովը կու գայ. օրհնեալ է ան որ երկինքէն կու գայ մարդոց հաճութիւն բերելով. օրհնեալ է ան որ իր ժողովուրդին փրկութիւն բերելու, և զանոնք իրենց մեղքերէն փրկելու կու գայ։

Դացէք ո՛րդեակք՝ իր տաճարը շնորհակալութիւնով, և իր սրահները մտէք գովութիւնով։ Ուղիղներուն կը վայլէ օրհնութիւն ընելը, տղոց ալ կը վայլէ։ Ծնկան վրայ եկէք, և Յիսուսը ձեզի իբրև թագաւոր և իբրև Տէր խոստովանեցէք։ Թո՛ղ անիկայ ձեր սրտերուն մէջ թագաւորէ, թո՛ղ ձեր սիրոյն մէջ առաջին տեղը անիկայ բռնէ։ Ընիկայ

բոլորովին սիրելի է. անիկայ ձեր ամենամեծ սիրոյն արժանի է. քանզի իր աբեամբը փրկեց ձեզ ու Աստուծոյ հետ հաշտեցուց, և ձեզ իր Աստուծոյն թագաւորներ ու քահանաներ ըրաւ:

Երկնից բարձրութեանը մէջ Աստուծոյ փառք, քանզի երկրիս վրայ խաղաղութիւն, ու մարդիկներուն հաճութիւն եղաւ:

Ովսաննա Հիսուս մեր Տէր արքային,
Որ գայ այս աշխարհ յանուն տէրունական.
Տէրայքն ողջունող գալստեան նորին,
Հրեշտակք մատուցող երկրպագութեան:

Կարձրէն մեզ կու գայ նոր աւետիսով,
Ներողութիւն սէր ձրի շնորհելով.
Փրկել մեզ մեղաց ծառայութենէ,
Երին սուրբ փառաց արժան ընելով:

Ընդա՛ռ Սիօն՝ թագաւորիդ վրայ,
Որ իր սուրբ տաճարն բնակելու կու գայ.
Մանկտիք իր սիրոյն երգը թող երգեն,
Սուրբքն իր յաղթութիւնն յայտնի քարոզեն:

Digitized by Google

## ԺԸ. ԵՍՏՈՒՇՈՒՑ ԽՆԵՄԲԸ

## ՍՈՆՍԼՈՒԿՆԵՐՈՒՆ ՎՐԵՑ

Զէ՞ որ հինգ ճնճղուկք չգոնէ երկու դրանիկ կը ծախուի , և անոնցմէ մէկը մոռցուած չէ Աստուծոյ առջեւն : Այլոյ չէր գլխուն բոլոր մազերն ալ համրուած է . ուրեմն մի վախնաք , քանզի որ դուք ցաւ չգերէն աւելի ազնիւ էք :
Լուկ . ԺԲ . 6 , 7 :

Այս ի՞նչ աղուոր ստորագրութիւն մըն է Աստուծոյ բարութեանը և ողորմութեանը . անիկայ բարի է , ինչպէս որ կը տեսնէք , մինչև անգամ իր ամենաակար և ամենափոքր ստեղծուածներուն , դաշտի անասուններուն , ու երկնից թռչուններուն . ճնճղուկը անգամ՝ որ փոքրիկ թռչուններուն ամենէն անարգն է , իր խնամքէն զուրկ չէ :

Զանոնք ստեղծող Աստուածը չմոռնար անոնց օրական հացը տալու . ու թէ և բազմաթիւ են , այսու ամենայնիւ անոնց ամենուն համար բաւական ուտելիք

պատրաստուած է. ծառեր կան՝ որ ա-
նոնց պտուղները կ'ընծայեն ձմեռուան ա-
տենն ալ, որպէս զի աս թռչուններուն
ուտելիքի պակսութիւն չըլլայ։ Ձեր երկ-
նաւոր Հայրը բարի է ամենուն, և իր
գթառատ ողորմութիւնները իր ձեռացը
բոլոր գործքերուն վրայ են։ Ուստի ան
որ երկնից թռչունները այսպէս կը կե-
բակրէ, ան որ դաշտի ծաղիկները այս-
պէս կը հագուեցընէ, և չէք հաւատար՝
ո՛րդեակք, որ ձեզի ալ անոնցմէ աւելի
հոգ տանի պիտի։ Ա՛յո, ինքը ըսած է.
Մի վախնաք, դուք շատ ճնճղուկներէ
աւելի աղէկ էք. ձեր երկնաւոր Հայրը
ալ աւելի ձեզ պիտի կերակրէ։

Դուք շատ թռչուններէ աւելի պա-
տուական էք, քանզի դուք անմահ հո-
գւոյ տէր էք — անանկ հոգիներու՝ որ
յաւիտեան պիտի մնան։ Երբոր թռչուն-
ներն ու անասունները մեռնին, ան է ա-
նոնց վախճանը. բայց երբոր դուք մեռ-
նիք, ձեր վախճանը ան չէ. քանզի ձեր
հոգիները մարմիններնուդ մեռնելէն ետև
ալ կենդանի պիտի մնան։

Դուք աւելի պատուական էք, քանզի
անոնցմէ աւելի ազնիւ նպատակի մը հա-



Digitized by Google

մար ստեղծուած էք։ դուք զԱստուած ճանչնալու և երկրիս վրայ իրեն ծառայելու համար ստեղծուած էք, որ կարենաք իր հետը բնակիլ, և աս կեանքէս ետև երկնից մէջ հրջանիկ վիճակ մը վարել։

Ո՛նճղուկները զԱստուած չեն ճանչնար որ զիրենք ստեղծեց, ոչ ալ ան ձեռքը որ զիրենք կը կերակրէ։ իսկ դուք՝ ուրդեակք, կրնաք ճանչնալ և մտքերնիդ բերել ձեր Ստեղծիչը։ դուք կրնաք սիրել զԱստուած՝ որ ձեզ կը կերակրէ ու կը հագուեցրնէ։ կրնաք ամէն օր խնդրել իրմէ ինչ շնորհք որ կ՚ուզէք, և ձեր ընդունած բարիքին համար իրեն շնորհակալութիւն մատուցանել։ կրնաք սիրել զանիկայ իբրև ձեր երկնաւոր Հայրը, և ապահով էք որ անիկայ բնաւ ձեզ պիտի չմոռնայ։

Այսպէս՝ կը տեսնէք որ Աստուած ձեզ երկնից թռչուններէն և դաշտի անասուններէն աւելի ազնիւ ստեղծուածներ ըրաւ, և թէ որ անոնց համար հոգ կը տանի, ալ աւելի ձեզի համար հոգ պիտի տանի։ մի՛ վախնաք ձեր երկնաւոր Հայրը ձեզի ուտելիքի և հագուստի պակասութիւն քաշել պիտի չտայ։

Digitized by Google

Այն որ աղուաւի ձագերուն ձայնը կը լսէ ։ երբոր իրեն կ՚աղաղակեն ։ ալ աւելի ձեր ձայնը պիտի լսէ ։ երբոր կ՚աղաղակէք ։ Եթէ աղքատ էք ։ մի վախնաք ։ քանզի աղքատը կ՚աղաղակէ ։ և Տէրը անոր ձայնը կը լսէ ։ և զանիկայ իր ամէն նեղութենէն կը փրկէ ։ Եթէ որբ էք ։ մի վախնաք ։ քանզի Աստուած որբերուն հայրն է ։ Կամ հայրերնիդ ու մայրերնիդ ձեզ երեսէ ձգած են ։ մի վախնաք ։ քանզի Տէրը ձեզ պիտի բարձրացրնէ ։ Անիկայ գիտէ ձեր ամէն պիտոյքը ։ և ձեր ամէն վախը ։ առանց իր հրամանին ձեզի բան մը չպատահիր ։

Ո՛ղբեակք՝ քանի որ ձեր երկնաւոր Հայրը ձեզի համար այսպէս հոգ կը տանի ։ ալ ի՞նչ վախի տեղ ունիք ։ Ուրիշ բանէ մը պէտք չէ վախնաք ։ բացի մեղքէն ։ և Աստուծոյ անհաճոյ ըլլալէն ։ Յիրաւի ցաւալի բան է զԱստուած ձեզի դէմ բարկացընելը ։ սակայն թէ որ զանիկայ սիրէք և անոր ծառայութիւն ընէք ։ ալ պէտք չէ վախնալ թէ անիկայ ձեզի պիտի բարկանայ ։ անիկայ միայն չարերուն և զինքը չսիրողներուն ու իրեն ծառայութիւն չընողներուն դէմ բարկացած է ։

Digitized by Google

Աստ ալ մտքերնիդ ըլլայ որ՝ անիկայ երկնից թռչուններէն աւելի բան կը պահանջէ ձեզմէ : Ընտնց բանականութիւն տուած չէ, աստ պատճառաւ անոնցմէ աւելի բան չպահանջեր. սակայն ձեզմէ կը պահանջէ զինքը սիրել իբրև ձեր երկնաւոր Հայրը, և իրեն հլու և հնազանդ որդիները ըլլալ : Դացէք, ուրդեակք, շնորհակալութիւն մատուցէք անոր՝ որ ձեզի դաշտի անասուններէն աւելի հանճար տուած է, և ձեզ երկնից թռչուններէն աւելի իմաստուն ըրած է :

Իրեն ըսէք թէ՝ ով Տէր, մարդը ի՞նչ է, որ անիկայ կը յիշես, կամ տկար մանուկը՝ որ անոր խնամք կը տանիս : Սակայն դուն ամենուն բարիք կ'ընես, և քու գթառատ ողորմութիւններդ քու գործքերուդ վրայ են : Օրհնէ Տէրը՝ ով իմ անձս :

Ամենուս Հայրն է Տէր Աստուած,
Ողորմութեամբ սիրով լցուած.
Իր գութն առատ է մեր վրայ,
Ամէն երկինքն է ինք նատած :

Ուռանց իր բարձր հրամանին,
Ոչնչուկ մ'անգամ գետին չէ ինար.

Digitized by Google

Այսանկ գթած հօր մը որդին ,
Ի՞նչպէս անվախ գիրկըն չերթար ։

Սեղքէ 'ի զատ բանէ չվախնանք ,
Ան առելի է Աստուծոյ .
Թող իր պատուէրն պահած չըլլանք ,
Ա՛ստիճանանանք սատակ պատմոյ ։

---

## ԺԷ. ԿԻՐԱԿՈՍ ԵՂԻՍԷ

**Դիւռնի Էղէ՝ ինչպէս որ Հէր Հայրն ալ գիւռնի է ։ Ղուկ . Զ . 36 ։**

Աստուած բարի է , և իր քաղցր ողորմութիւնները իր բոլոր գործքերուն վրայ յայտնի կ'երևնայ ։ Աս բարի Աստուածը՝ որդեակք , ձեր երկնաւոր Հայրն է , և կը յուսանք որ դուք ալ իրեն պէս ըլլալու փափաք ու սէր ունիք ։ Մեծութեան կողմէ չէք կրնար անոր նմանիլ , բայց բարութեան կողմէ կրնաք անոր նըմանող ըլլալ . կրնաք իրեն պէս սուրբ ըլլալ , կրնաք իրեն պէս ողորմած ըլլալ , կրնաք բարի ըլլալ , և ձեր բոլորտիքը եղողներուն բարիք ընել ։ Ձեզի երջան-

Digitized by Google

կութիւն մը և հաճութիւն մըն է ողորմած ըլլալը ։

Ընդութ ու անողորմ մարդը 'ի հարկէ ապերջանիկ պիտի ըլլայ , քանզի իր սրտին մէջ սէր և կարեկցութիւն չունի ։ Ընիկայ չգիտեր թէ ինչ բերկրալի բան է քաղցածը կերակրելը , ու մերկը հագուեցընելը . վերջին օրը Յիսուս ալ անանկնելուն պիտի ըսէ թէ՝ "Մէկդի գայէք ինծմէ , ձեզ չեմ ճանչնար . ինչու որ անօթեցայ՝ և ինծի ուտելիք չըտուիք . ծարաւեցայ՝ ու ինծի չխմցուցիք . օտարական էի՝ և զիս ներս չառիք . հիւանդ ու բանտի մէջ էի՝ և զիս տեսնելու չեկաք . և ասոնք յաւիտենական տանջանքը պիտի երթան" ։

Բայց ողորմած մարդը սիրելի է . Յիսուս ըսած է . "Երանի՝ ողորմածներուն , ինչու որ անոնք ողորմութիւն պիտի գտնեն" ։ Երանի անոր՝ որ աղքատին հոգ կը տանի , նեղութեան օրը Տէրը պիտի փրկէ զանիկայ . Տէրը պիտի պահէ ու ապրեցընէ զանիկայ . երանելի պիտի ըլլայ երկրի վրայ . Տէրը անոր ոյժ պիտի տայ տկարութեան անկողնին մէջը . անոր ամէն անկողինը պիտի դարձընէ անոր հիւան-

դուրեան ատենը։ Ողորմած մարդը աղ-
քատին օրհնութիւնը կ'առնէ. ինչպէս
որ Յոբ ալ կ'ըսէ՝ ես աղաղակող աղ-
քատը, և որբը, ու օգնութիւն չունե-
ցողը կ'ազատէի. կորսուելու վրայ եղո-
ղին օրհնութիւնը վրաս կու գար. ու
որբևարիին սիրտը կ'ուրախացընէի։ Ան-
շուշտ ուրդեակք՝ անօթութենէ կորսուե-
լու վրայ եղողին օրհնութիւնը առնելէն
աւելի մեծ երջանկութիւն չկրնար ըլլալ
երկրիս վրայ։

Արդէն կարդացած էք ան խեղճ մար-
դուն պատմութիւնը, որ գողերուն ձեռքը
ինկեր էր, որոնք զանիկայ վիրաւորեր՝
ու կիսամեռ թողուցեր էին։ Որը ուրեմն
կը կարծէք որ աւելի մեծ երջանկութիւն
մը զգացած ըլլայ իր սրտին մէջ. բարի
Սամարացի՞ն՝ որ անոր խնամք տարաւ,
և անոր վէրքին վրայ եղ թափեց. թէ
անգութ քահանան ու Լևտացին, որոնք
անհոգութեամբ անցան, ու թող տուին
անիկայ՝ որ ան խեղճ վիճակին մէջ կոր-
սուի։ Անշուշտ պիտի ըսէք թէ անիկայ
որ խեղճին գութ ցուցուց։

Ուրեմն ուրդեակք, գուք ալ անոր
ըրածին պէս ըրէք. դացէք՝ դուք ալ

Digitized by Google

ձեր երկնաւոր Հօրը պէս՝ քաղցածին և կորսուելու վրայ եղողներուն հաց տա-ռէք • դացէք հիւանդներն ու նեղեալները մխիթարեցէք : Դուցէ հիմա անոնց ընե-լիքնիդ չնչին բան մը ըլլայ • բայց ձեռ-քերնէդ եկածը ըրէք — ձեր փոքրիկ ամ-բարանոցէն քիչ մը բան տարէք անոնց՝ իրենց չքաւորութեանը օգնելու : Անոնց հետ քաղցրութեամբ խօսեցէք • քանզի մինչև անգամ ձեր կարեկցաբար նայ-ուածքը կրնայ անոնց քաջալերութիւն և մխիթարութիւն տալ : Ըսէք անոնց թէ ձեռքերնէդ եկածը պիտի ընէք իրենց , և թէ կը ցանկաք որ աւելի մեծ օգնու-թիւն մը ընելու կարող ըլլայիք : Ըսէք անոնց թէ ձեր երկնաւոր Հայրը ողոր-մած ըլլալով՝ պիտի թէ անոնք ի՞նչ բանի պէտք ունին • և կարող ու կամեցող ալ է անոնց բոլոր պիտոյքը լեցրնելու : Ը-սէք անոնց թէ Աստուած աղքատներուն ձայնը կը լսէ՝ երբոր իրեն կ՚աղաղակեն :

Ի՞նչ կը կարծէք՝ որդեակք , ասանկ մարդասիրական գործքեր ընելէն ետև ի՞նչ զգացում պիտի ունենաք : Երջանկու-թիւն մը պիտի չզգա՞ք ձեր ներսիդին : Այո՛ , աս աշխարհիս հարստութիւններն

ու զուարճութիւնները վայելելէն աւելի երջանկութիւն մը պիտի զգաք ձեր ներսիդին։ Ձեր սրտերէն երախտագիտութիւնը յորդառատ պիտի բղխի առ Աստուած, որ ամէն բան ձեզի առատապէս տուաւ վայելելու, և իր բարիքները աղքատաց հաղորդելու համար ձեզի սիրտ մըն ալ տուաւ։

Ընչուշտ ունաւ պիտի չուզէք ձեր ունեցած փոքրիկ գանձերնիդ սնոտի և ունայն բաներու մսխել, քանի որ կրնաք Տէրոջը փոխ տալ՝ աղքատին ողորմութիւն տալով։ Մտքերնիդ բերէք ինչ որ Յիսուս պիտի ըսէ վերջին օրը, իր աջ կողմը եղողներուն. «Եկէք իմ Հօրս օրհնածները, ձեզի համար պատրաստուած թագաւորութիւնը ժառանգեցէք. ինչու որ անօթեցայ՝ և ինծի ուտելիք տուիք. ծարաւեցայ՝ ու խմցուցիք ինծի. օտարական էի՝ և զիս ներս առիք. մերկ էի՝ և զիս հագուեցուցիք. հիւանդ՝ ու բանտի մէջ էի, և զիս տեսնելու եկաք։ Ասոնք պիտի երթան յաւիտենական կեանքը"։

Ինչ երանաւոր Սուրբ Հօրդ պէս,
Աղքատ մարդուն միշտ գութ ցուցուր.



Digitized by Google

Զոհ օդնուիթիւնդ առատապէս ,
Զքաւորին դուռը հասցուր ։

Պիտի սիրով այսի կնկան ,
Որբին եղէր սէրտ բարեկամ ,
Ինչ պարգև տալ չէս բաւական ,
Հերիք է փոխ տալը անդամ ։

Երկնաւոր Հօրդ գութն յիշէ ,
Իր սուրբ պիտոյն նման գործէ .
Որ քեզ առատ շնորհք պարգևէ ,
Ամէն ցանցէ աղատ պահէ ։

Խոյժին աղօթքն երկինք կ'ելլայ ,
Ա՛ռանց բարիք դուն անվախճան .
Երբ ան արդար դատաւորն գայ ,
Ա՛ընտրէ իրեն քեզ բարեկամ ։

---

## ԺԴ. ՍԱՄՈՒԷԼ ԱՐՇԱՄԻՆԻՆ

Այս աս պղտ-ն հասնար ապրելի ըրի , ո-
Տէրը իմ խնդրուածիս ինձի պատա- ,
ինչ որ անկէ խնդրեցի ։ Հիմա է ալ
զանիկայ Տէրոջը փոխ կու պամ . անիկայ
իր Բոլոր կեանցը մէջ Տէրոջը փոխ պը-
տուած ըլլայ ։ ա թագ . ա . 27 . 28 ։

Ա՛յսպէս Սամուէլին բարեպաշտ մայրը
Աստուծոյ իրեն պարգևած մանուկը Տէ-

Digitized by Google

բոջը և անոր ծառայութեանը նուիրեց։ Աստղուն համար աղօթք ըրած էր։ Անիկայ գիտէր որ իր որդեծնութիւնը և իր վայելած ուրիշ բոլոր բարիքները Աստուծմէ էին. ասոնց պատճառաւ անիկայ Աստուծոյ տաճարը՝ այսինքն աղօթքի տունը գնաց, և հոն իր սիրտը Աստուծոյ առջևը բացաւ. "Ու ուխտ ըրաւ ըսելով. Ո՛վ Տէր զօրութեանց՝ թէ որ քու աղախնոյդ քաշած նեղութեանը նայիս, և զիս յիշես, և քու աղախնդ չմոռնալով, քու աղախնոյդ արու զաւակ մը տաս, զանիկայ Տէրոջը պիտի նուիրեմ բոլոր կենացը օրերուն մէջը"։

Աստ բարեպաշտ կինը մանչ զաւակ մը խնդրեց. բայց իր բաղձանքը ասիկայ չէր, որ անիկայ ստացուածներու ժառանգ ըլլայ, կամ աշխարհիս վրայ հարստութեան ու մեծութեան տիրանայ, հապա Աստուծոյ տաճարին մէջ անոր ծառայելու պատիւը ունենայ, և սուրբ բաներու մէջ Տէրոջը սպասաւորութիւն ընէ։ Ուերբոր Աստուած անոր խնդիրքը կատարեց՝ մանչ զաւակ մը տարով, անիկայ իր ըրած ուխտը յիշեց, և ծիծէն կըտրուելուն պէս, զանիկայ իր հետը ա-

Digitized by Google

ռաւ , ու Տէրոջը տուն՝ տաներով , Հեղի քահանայապետին յանձնեց , և հոն զանիկայ Տէրոջը տուաւ ասս մեր բնաբանին խօսքերը խօսելով . "Այս տղուն համար պաղօթք ըրի , ու Տէրը իմ խնդրուածքս ինձի տուաւ , ինչ որ անկէ խնդրեցի : Հիմա՝ ես ալ զանիկայ Տէրոջը փոխ կուտամ . անիկայ իր բոլոր կենացը մէջ Տէրոջը փոխ տրուած ըլլայ" :

Այս հաճոյական պատմութենէս կը սորվինք թէ ինչ է բարեպաշտ ծնողաց պարտաւորութիւնը : Այս է որ՝ պէտք է անոնք գիտնան թէ իրենց զաւակները Տէրոջը ձեռքէն կ'ընդունին , և թէ պարտքերնին է զանոնք Աստուծմէ վախնալու և իրեն ծառայելու նուիրել : Այ գուցէ՝ իմ ծազկահասակ բարեկամներս , ձեզմէ մէկ քանիները Սամուէլին պէս՝ բարեպաշտ մայրեր ունեցած են , որոնք ձեզ Տէրոջը նուիրած են , ասոր պէս խօսքեր զրուցելով . "Այս տղուն համար աղօթք ըրի , ու Տէրը իմ խնդրուածքս ինձի տուաւ" : Այս որդին ինձի տուողը Աստուած է , ու ես զանիկայ իրեն ծառայութեանը պիտի հնուիրեմ : Անիկայ ըսած է որ՝ "Բոլոր հոգիները իմն են .

ինչպէս հօրը հոգին՝ նոյնպէս ալ որդւոյն հոգին իմն է"։ և աս տղան իմ ձեռքս յանձնած առնը ասոր նման խօսք չի ըսածի պէս չելլար։ "Հա՛ անմահ հոգի մը որ կրնայ երջանիկ կամ թշուառ ըլլալ յաւիտեան. զանիկայ ինձի ու իմ ծառայութեանս համար կրթէ"։

Էրդ՝ արժա՞ն է որ աս սիրուն տղան՝ որն որ խանդակաթ սիրով կը սիրեմ, իմ անհոգութեամբս թողում որ յաւիտեան թշուառ ըլլայ։ Սարսափելի՜ խորհրդածութիւն։ Սակայն ի՞նչ բերկրալի բան է խորհիլ որ Աստուծոյ օրհնութիւնը իմ ջանքիս վրայ հանելով՝ ան մանուկը զինքն ստեղծող Աստուածը պիտի ճանչնայ, և հոս զանիկայ պիտի սիրէ, ու անոր ծառայութիւն ընէ, և հանգիստ ձեռալ աշխարհին մէջ անոր հետ պիտի բնակի յաւիտեանս յաւիտենից։ Ինքզբաղ խորհրդածութիւն։ Անիկայ լեզու ելածին պէս՝ իր Աստուծոյն ու Փրկչին գովաբանութիւնները պիտի սրվի. և իր փոքրիկ ձեռքերը իրեն շնորհքներ բաշխող Աստուծոյն պիտի վերցրնէ, և իր սրտերը իր Ստեղծողին առաջը երկիրպագութեան պիտի սրվին։ Ո՛վ Աստուած

իմ ։ անոր առ աշխարհիս մէջ հարուստ ու մեծ ըլլալուն չեմ փափաքիր ։ միայն թէ անանկ սիրտ մը տաս անոր ։ որ քեզ սիրէ ։ ու քեզի ծառայութիւն ընէ ։ սրտանց քեզի կը նուիրեմ զանիկայ ։ որն որ ինծի պարգևեցիր ։ և յաւիտեան քուկդ ըլլայ ։

Շատ բարեպաշտ մայրեր ասոր նման խօսքեր խօսեր են ։ և կը յուսանք որ դեռակք ։ որ ձեզմէ շատերուն մայրերն ալ նոյնպէս կ'ընեն ։ Այս դուք անոնց հաճոյական յոյսերն ու ակնկալութիւնները պարապ հանել անշուշտ պիտի չուզէք ։ Մտածեցէք մէյմը՝ թէ որչափ աղօթքներ կը նեն ձեզի համար ։ որչափ արցունքներ կը թափեն ։ ձեր բարեկեցութեանը համար ։ Ինչպէս անտանելի բան է անոնց մտածելը ։ որ իրենց տղաքը՝ փոխանակ Աստուծոյ որդիներ ըլլալու ։ Սատանայի որդիք պիտի ըլլան ։ Իրենք որ ամէն բանէն աւելի կը սիրեն զԱստուած ։ պիտի չփափաքի՞ն որ դուք ալ իրենց պէս զանիկայ սիրէք ։ Իրենք որ յաւիտեան երկինքը բնակելու յոյս ունին ։ ջերմեռանդութեամբ պիտի չփափաքի՞ն որ դուք՝ իրենց սիրելի տղաքը՝ իրեն պէս ան երկ-

Digitized by Google

նային թագաւորութեանը ժառանգներ ըլլաք ։

Ուստի որդեակք՝ թէ որ անանկ ծնողքներ ունիք , անոնց համար որչափ շնորհակալութիւն որ մատուցանէք Աստուծոյ , քիչ է . անոնց ամէն կերպով յարգանք , սէր և հնազանդութիւն ցուցուցէք . և անոնց աղօթքներն ու ձեզի տուած կրթութիւնները թող պարապ չելլեն ։ Ինկան վրայ գալով շնորհակալութիւն մատուցէք Աստուծոյ ան ամէն բարիքներուն համար՝ որ ձեր մանկական հասակին մէջ ձեզի պարգեւած է , այսինքն՝ շնորհաց Աստուածը ճանչնալնիդ , և զանիկայ Հայր անուանելնիդ պզտիկութենէ սորվելնուդ համար ։ Աղօթքով խնդրեցէք որ ձեր ծնողները ամէն բանէ աւելի զԱստուած սիրելնիդ , և զուարթամտութեամբ ու յօժար կամքով անոր ծառայելնիդ տեսնելով աս սրտի ուրախութիւնը ունենան , ու նաև որ դուք իրենց Աստուածն ու ձեր Աստուածը բնաւ չմոռնաք ։

Այսպէս բարի ծնողքները ,
Իրենց որդիքն Տէրոջ կուտան .

Digitized by Google

Ինձանց աղջիկք ու Սուրբ Դիրքը,
Սարվեցքանելու ջանք կ'ունենան։

Որանք մնասաղ հասակի մէջ,
Աստուծոյ տունն ուրք կոխելով.
Խոր կը տպուի մուքերնուն մէջ,
Իր գովութիւնն երգել սիրով։

Նշանելի է ան տղան,
Որ զինքն երկնից է նուիրած.
Անարատաւոր խնամքն մայրական,
Հոգւոյին հետն է առած։

Digitized by Google

## ԺԴ. ՏԻՄՈԹԷՈՍԻ ՊԱՏՄԱԿԱՆ

Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալը Աստուծոյ կամքովը՝ կենաց խոստմանը ապէս ։ որ Քրիստոս Յիսուսով է . Տիմոթէոս իմ սիրելի որդեակս՝ ընտրեալ ։ ողորմութիւն և խաղաղութիւն Հօր Աստուծմէն ։ ու Քրիստոս Յիսուս մեր Տէրոջմէն ։ Շնորհակալ եմ Աստուծոյ՝ որն որ կը պաշտեմ իմ նախնիներուս հաւատով խղճմտանովով ։ երբոր անպակաս է եղ իմ աղօթիւս մէջ կը յիշեմ գիշեր ու յօրէն . կը ցանկամ տեսնելու՝ ինչպէս քեզ արցունքներդ ։ որ ուրախութիւնովը լեցուիմ . մտածելով ան պատահարները որ դուն ունիս ։ որ առաջ ու Լուսդրէս մեծ մօրդ վրայ քնակեցաւ ու ու Եւնիկէ մօրդ . հաւատացուն գիտեմ՝ որ ու վրայդ ալ կայ ։

Բ Տիմ . ա . 1—5 ։

Ի՞նչ գորովական սիրով կը սկսի առաքեալը աս նամակը՝ որ Տիմոթէոսին կը խրկէր . զանիկայ կը կոչէ իր որդին ։ իր սիրելի որդին ։ Ասոր բարօրութիւնները կը

մաղթէ. ոչ թէ հարստութիւն և պա-
տիւ, այլ շնորհք, ողորմութիւն և խա-
ղաղութիւն. ոչ թէ ան բարիքները՝ որ
աշխարհս կրնայ տալ, այլ ան ճոխա-
գոյն բարեմասնութիւնները, որ Աստուծմէ
ու Քրիստոսէն կու գան։

Իմ ծաղկահասակ բարեկամներս՝ ձեր
ծնողքները ձեր վրայ Աստուծոյ շնորհքը
գալը կրնան խնդրել. բայց Աստուծոյ
տուած շնորհքը միայն կարող է ձեզ
երջանիկ ընելու։ Յիսուս Քրիստոսով
եղած իր ողորմութիւնն է որ պիտի ներէ
ձեր բոլոր մեղքերը։

Ասոնք են Պօղոս առաքելոյն Տիմո-
թէոսին համար փափաքած օրհնութիւն-
ները. և մենք ալ նոյնպէս կը փափա-
քինք՝ որդեակք, որ Աստուած բարե-
հաճի ձեզ այսպէս օրհնելու։ Պօղոս
առաքեալ ոչ միայն կ'օրհնէ զՏիմոթէոս,
այլև անոր համար աղօթք ալ կ'ընէ.
և թէպէտ անկէ հեռու տեղ մը կը
գտնուի, բայց զանիկայ չմոռնար, հապա
անոր համար գիշեր ցորեկ կ'աղօթէ։

Ա՛ս էր ամենալաւ միջոցը՝ որով իր Տի-
մոթէոսին վրայ ունեցած սէրը կրնար
ցուցընել։ Ինքը գիտէր որ միայն Ա՛ս-

տուած կարող էր զանիկայ ճշմարտապէս բարի ու երջանիկ ընելու. գիտէր նաև որ Աստուած իր ծառաներուն աղօթքը պիտի լսէր, ու պատասխան տար։

Ուրեմն դուք պիտի չերթաք ձեր ծնողքներուն, ու երէցներուն, և խնդրէք անոնցմէ որ ձեզի համար աղօթք ընեն, ձեզ Աստուծոյ առջևը իրենց սրտերուն մէջ կրեն։ Արդարներուն աղօթքը անոր հաճելի է. անիկայ աղօթից լսող ու պատասխանող Աստուած է. և դուք յուսալու իրաւունք ունիք որ անոնց աղօթքները օրհնութիւններով գլուխներնուդ վրայ պիտի հանգչին։

Ի՞նչ էր պատճառը՝ իմ սիրելի բարեկամներս, որ Տիմոթէոս այսչափ սիրելի էր Պօղոս առաքեալին։ Ան էր որ՝ անիկայ իր մանկութենէն ի վեր Տէրոջմէն կը վախնար։ Առաքեալը Տիմոթէոսին առջի գաստիարակը եղաւ Քրիստոսի Աւետարանին վարդապետութեանցը մէջ։ Անոր գաս տուած էր. անոր համար աղօթք ըրած էր. անոր վրայ հսկեր էր գորովասիրտ ծնողի մը գթով. և իր որդւոյն Տիմոթէոսին ճշմարտութեան մէջ յաջողելը տեսնելով՝ ուրախութեամբ լցուած էր։

Digitized by Google

Անիկայ խնդութեամբ կը յիշէր Տիմոթէոսին մեծ մայրը՝ Լաւոդիան, ու մայրը՝ Եւնիկէն. և նոյն հաւատքը անոնց որդւոյն վրայ տեսնելով կ'ուրախանար։

Իմ ծաղկահասակ բարեկամներս՝ չկայ մէկ բան մը որ այնչափ մեծ ուրախութիւն պատճառէ Աւետարանին պաշտօնեաներուն սրտին, քան որչափ ձեզ տեսնել որ ձեր ծնողացը հաւատքին և բարեպաշտութեանը նմանող կ'ըլլաք՝ թէ որ անանկ ծնողքներ ունիք։ Անոնք կ'ուրախանան՝ երբոր կրնան ձեզի յիշեցնել թէ որչափ գորովանօք անոնք ձեզի դաստիարակութիւն ըրած են, ձեզի համար աղօթք ըրած, ու լացած են. ուստի ան ծնողքներուն բարեպաշտութեան ճըշմարիտ պատկերը ձեր վրայ տեսնելով՝ խնդութեամբ կը լցուին. կ'ուրախանան նաև՝ խորհելով որ անոնց երկինք գացած ատենը՝ դուք իրենց տեղը պիտի բռնէք Քրիստոսի եկեղեցւոյն և աշխարհիս մէջ։

Եւ անոնք կը յորդորեն ձեզ՝ ինչպէս որ Պօղոս կը յորդորէ Տիմոթէոսը, որ ձեր սորված բաները շարունակ յիշէք ու ի գործ դնէք։ Կ'աղաչենք ձեզ՝ թէ ձեր ծնողացն ու ձեր երէցներուն, և թէ ձեզ

անձերուն սիրոյն համար՝ որ շարունակ
Ջանք ընէք իմաստուն ըլլալու փրկութեան։

Տեսա՛ ինչ բարի է Աստուած,
Որ իր ականկն է միշտ բաց.
Մանկանց ձայնն լսելու,
Նրբ կ՚աղօթեն խոնարհած։

Իր Սուրբ Դրքին յայտնի է,
Թռչ տղաքներն կը սիրէ.
Դարուվասիրտ հօր մը պէս,
Տղոց աղօթքն կ՚ընդունէ։

Մանկանց բերանէն գոհութիւն,
Ա՛ն երբ լսել կը սիրէ.
Նրա խայիցն գովութիւն,
Հնչակ իրեն վեր կ՚ելլէ։

Ելէ՛ որդիք հաւատքով,
Օ՜ինքն ըսէ՛ք ձեզ բարեկամ.
Ձեր ձայնն իրեն հասնելով,
Ձմերժուիք յաւիտեան։

---



Digitized by Google

## ԺԷ. ՍՈՒՐԲ ԳԻՐՔ

Ինչո՞ւ որ դուն մանկու

՝ գիտես զ՝ Սուրբ Գիրքն՝ զիրքերը գիտես, որոնք կրնան քեզ հմաստուն ընել՝ հաւատքով՝ Քրիստոսի մէջ։ Ա Տիմ. գ. 15։

Իմ ծաղկահասակ բարեկամներս՝ կը ցանկանք տեսնել Քրիստոսի նմանող ըլլալիդ, որ ինչպէս հասակով կը մեծնաք, անանկ ալ իմաստութեամբ զարգանաք։

Ամէն բանին գլուխը իմաստութիւն է. ուստի իմաստութիւն ստացիր. անիկա՝ քու գլխուդ շնորհաց զարդ պիտի տայ, և քեզի փառաց պսակ պիտի պարգևէ։

Շուտ մը զուարճութիւն պիտի գտնէք գրքեր կարդալէն, որոնցմէ պիտի հասկընաք թէ ինչ տեսակ աշխարհք է աս, և թէ քու ծնանելէդ առաջ ինչ բաներ անցեր գացեր են անոր մէջ։ Հաճութեամբ պիտի կարդաք իմաստուն ու բարի մարդոց պատմութիւնները, որ դուք ալ սորվիք անոնց նմանողը ըլլալ։ Սակայն՝ որդեակք, ամէն բաներէն աւելի կը փափաքինք փրկուելու իմաստուն ըլլալիդ տեսնել։ Կրնայ ըլլալ որ շատ բաներ

գիտնաք աշխարհիս ։ և Աստուծոյ գործքե-
րուն վրայով ։ և դեռ բան մը չգիտնաք
ան Աստուծոյն վրայով ։ որ աշխարհը
ու բոլոր անոր մէջ եղածները ստեղծեց ։

Կրնայ ըլլալ ալ որ շատ իմաստուն
ըլլաք ։ և աս աշխարհիս մէջ հարստու-
թիւն ու պատիւ ստանաք ։ և նոյն ա-
տենը տգէտ ըլլաք ։ ու չգիտնաք թէ ինչ
պիտի ըլլայ ձեր յաւիտենական վիճակը ։

Կրնայ ալ ըլլալ որ շատ բան գիտ-
նաք ։ և դեռ բան մը չգիտնաք խաչը ե-
լած Քրիստոսի վրայով ։ որն որ Պօղոս
առաքեալ խիստ գերազանց իմաստութիւն
ըլլալ կը սեպէ . համառօտիւ ըսելով ։
կրնայ ըլլալ որ շատ բան ալ գիտնաք
աս աշխարհիս վրայով ։ և դեռ տգէտ
ըլլաք ան աշխարհին վրայով՝ որուն մէջ
յաւիտեան պիտի մնաք ։

Իմա՛ ո՛րդեակք ։ ցաւալի բան մը
պիտի չըլլա՞ր ։ թէ որ ամէն գիտութիւն
ունենալէն ետև՝ բոլորովին տգէտ ըլլայիք
Աստուծոյ ։ Քրիստոսի ։ երկինքի ։ դը-
ժոխքի ։ և կամ ձեր հոգիներուն վրայով ։
Իսա տեղ մեր կեանքը կրնայ շատ կարճ
ըլլալ . ուրեմն ցաւալի վայրկեան մը պիտ՝
չըլլա՞ր՝ մեռնիլը ձեր վրայ հապաց ժամանա-

կը, թէ որ զԱստուած ձեզի բաբեկամ ստացած չլլայք, և Յիսուսը ձեզի փրկիչ։ Յիրաւի ցաւալի բան է վերջին օրը օգնական Աստուծոյ բերնէն սա խօսքը լսելը թէ՝ Մէկզի գացէք ինծմէ, ես ձեզ չեմ ճանչնար։

Այսպէս ուրդեակք՝ կը տեսնէք որ ճշմարիտ իմաստութիւնը աստուածպաշտութիւնն է, և թէ ճշմարիտ իմաստուն միայն անիկայ է, որ իմաստուն է փրկուելու։ Ուրեմն եռանդուն փափաքով պիտի չքնտուէք թէ ուր կրնաք տրվիլ սա ճշմարիտ իմաստութիւնը։

Մեր ընարանք ձեզի կ'իմացընէ թէ՝ Սուրբ Դիրքն է որ կարող է ձեզ իմաստուն ընել փրկուելու։ Ընոր մէջ պարունակուածները բուն Աստուծոյ խօսքերն են, քանզի հին ատենի սուրբ մարգիկները գրած են, ինչպէս որ Աստուած տրվեցուցեր էր անոնց՝ իր Սուրբ Հոգովը։ Անոնք յաւիտենական կենաց խօսքեր են, անանկ խօսքեր՝ որոնց միջոցով կրնաք փրկուիլ։ Դուք թէ և պզտիկ էք, այսու ամենայնիւ շատ բաներ կան որ կրնաք գիւրաւ հասկընալ. քանզի ընտանք չէ թէ միայն ծերերուն,

այլ և դեռահասներուն համար ալ ։ և չէ թէ միայն իմաստուններուն ։ այլ և տըգէտներուն համար ալ գրուած են ։

Ինոր մէջ շատ զուարճալի պատմութիւններ պիտի գտնէք ։ որոնք ձեզի զբօսանք մը և կրթութիւն մը պիտի ըլլան ։ ու շատ սիրուն օրինակներ ալ ։ որոնցմով իմաստուն և բարի պիտի ըլլաք ։

Սուրբ Գիրքը շատ տեղեկութիւններ կու տայ ձեզի Աստուծոյ ուրչափ մեծ և ուրչափ բարի ըլլալուն վրայով ։ անիկայ այնչափ մեծ է որ երկնից երկինքը չէրբնար պարունակել զանիկայ ։ և նոյն ատենը այնչափ զիջանող՝ որ ամէն դաթէի եկած սրտերուն մէջ կը բնակի ։ Ինկէ պիտի իմանանք թէ Աստուած այնչափ սիրեց աշխարհս ։ մինչև անգամ իր միածին Որդին տուաւ ։ որպէս զի ով որ ատոր հաւատայ՝ չկորսուի ։ հապա յաւիտենական կեանք ժառանգէ ։ թէ Յիսուս՝ ձեր բարեգութ Փրկիչը եկաւ կորսուածները փնտռելու ու գտնելու ։ ձեզ ապաշխարութեան կանչելու և ձեզ մեղքերնէդ փրկելու ։ Ինկէ պիտի սորվինք թէ պէտք է որ սուրբ ըլլաք ։ թէ որ յաւիտեան երջանիկ ըլլալ ուզէք ։ թէ

Digitized by Google

ամէն բանէն աւելի պէտք է որ զԱստուած սիրէք ։ և ձեր ընկերներն ալ՝ ձեր անձերուն պէս . և թէ պէտք է որ բարի ըլլաք ։ և ձեր բոլորտիքը եղողներուն բարիք ընէք ։

Ընկէ պիտի [illegible]նաք որ ձեր կենաց ժամանակը կարճ է ։ և թէ մահը ձեր չկարծած ատենը վրանիդ կը հասնի ։ և թէ աս պատճառաւ պէտք է որ արթուն կենաք ու աղօթք ընէք ։ որ փորձութեան մէջ չմտնէք ։ ու երբոր ձեր Տէրը գայ ։ ձեզ արթուն գտնէ ։ և պատրաստ՝ իրեն հետ երկինքի մէջ յաւիտեան բնակելու ։

Ահա աս է՝ իմ Եղբայրական բարեկամներս ։ Սուրբ Գրքին ձեզի սորվեցընելու իմաստութիւնը ։ և ճիշդ հիմա է ժամանակը՝ որ զանիկայ սորվելու սկսիք ։ Դուք հոգիներու՝ անմահ հոգիներու տէր էք . և որչափ ալ կանուխ սկսիք աս բաներուն վրայով հարցուփորձ ընել ։ տակաւին չափէն աւելի շուտ ըրած չէք ըլլար աս բանը՝ թէ ինչ պէտք է ընէք փրկուելու համար . քանզի ի՞նչ օգուտ կ՚ըլլայ ։ թէ որ բոլոր աշխարհը վասաբկիք ։ ու ձեր հոգին կորնցընէք ։

Digitized by Google

Ձեզի՝ ով որդեակք, բարիք կը մաղթեմ,
Վերին օրհնութիւնք ձեր վրայ իջնեն.
Հոգի՛ ձեր ամենուն սիրտը լեցնեն,
Խաղաղութիւն սէրն ձեր Տէր Աստուծմէն։

Հիշեմք խնդաւետ սիրելեաց հաւատքն,
Որով աս կեանքիս երկինք փոխեցան.
Տեսնել կը ցանկամք բուն անոնց տեղքն,
Որ վարքով անոնց նմանող կ'ելլան։

Անոնց խրատներն մտքերնիդ առէք,
Եմքին հաւատքնին դուք ալ ստացէք.
Ան իմաստութիւնն որ Սուրբ Գիրք կու տայ։
Ձեզ խիստ կարևոր գաս մը սեպիցէք։

---

Digitized by Google

## ԺԱ. ԵՍՏՈՒԵՆՈՅ ՓՆՏՈՒՆԻ.

Այ՝ դուն՝ որդեակ իմ Սողոմոն, փո-
հոյդ Աստուածը ճանչցի՛ , ու՝ անոր
կատարեալ սրտով ու յօժար կամօք ծա-
ռայութիւնը ընէ՝ . քանզի Տէրը ամէն
սիրտերը կը քննէ , ու՝ ամէն մտաց խոր-
հուրդներըը կը ճանչնայ . Եթէ որ զանիկայ
փնտռես , գտնես , և Եթէ որ զա-
նիկայ թողուս , ան ալ քեզ յաւիտեան
պիտի մերժէ : ՝ Մնաց . իբ . 9 :

Ասոնք են մեռնելու վրայ եղող հօր
մը իր սիրելի որդւոյն ըսած խօսքերը :
Արդ՝ կրնայ՞ արդեօք գտնուիլ անանկ
որդի մը , որ զգուշաւոր մտադրութեամբ
ականջ չդնէ իր հօրը պատուէրներուն :
Ի՞նչ ահաւոր և թախանձական կերպիւ
կը յորդորէ Դաւիթ իր որդին Սողոմոնը
որ յիշէ զԱստուած , իր Հայրերուն Աս-
տուածը . ան Աստուածը՝ որ բոլոր սիր-
տերը կը քննէ . ան Աստուածը՝ որ կա-
րող է զանիկայ երջանիկ կամ թշուառ
ընել յաւիտեան : Եւ միթէ իւրաքան-
չիւր բարեպաշտ ծնողք ալ սա յետեւեալ

Digitized by Google

խօսքերը չե՞ն զրուցեր : «Ո՛րդեակ իմ, քու հայրերուդ Աստուածը ճանչցիր՝ : Անիկայ իմ Աստուածս , իմ Հայրս և իմ Խարեկամս եղաւ : Անիկայ բնաւ զիս չթողուց . ամէն անգամ ինծի բարիք ը-բաւ : Երբոր նեղութեան մէջ ինկայ , անոր աղաղակեցի , ու ան ալ զիս փրկեց : Անիկայ իմ հիւանդութիւններս բժշկեց , իմ մեղքերս ներեց , և ինծի մօտ էր ա-մէն ատեն՝ երբոր իրեն կ՝աղաղակէի : Աս Աստուածը յաւիտեանս յաւիտենից իմ Աստուածս պիտի ըլլայ , ու մինչև իմ մեռնիլս անիկայ պիտի ըլլայ իմ առաջ-նորդս : Սիրէ՛ Տէրը՝ ո՛վ իմ որդիս , քանզի իր ողորմութիւնը յաւիտենական պիտի ըլլայ անոնց՝ որ իր ուխտը կը պա-հեն , և անոնց՝ որ իր պատուիրանքները կը յիշեն ու ի գործ կը դնեն : Անիկայ քեզի ալ Աստուած պիտի ըլլայ , թէ որ զինքը փնտռես . քանզի անիկայ աղօթք ընող տղան կը սիրէ , ու միշտ պատրաստ է անոր գտնուելու : Աստուած ըսեց քեզի համար ըրած աղօթքներս , և կը սպասէ որ քեզի գթութիւն ընէ : Թէ որ զա-նիկայ փնտռես , ինքը քեզի մօտ պիտի ըլլայ՝ քու հօրդ ու բարեկամիդ պէս :



Digitized by Google

փնտռէ զենքը՝ որդեակ իմ, խնդրէ զենքը քու բոլոր սրտովդ. քանզի Տէրը կը քննէ բոլոր սրտերը։ Զբլայ որ յանդգնիս միևակ շահութիւններովդ զենքը խնդրելու, հապա սրտովդ ըսէ անոր. 'Ո՛վ Հայր իմ, դուն եղիր իմ մանկութեանս առաջնորդը'։ և անիկայ քեզի առաջնորդ պիտի ըլլայ։

"Պակայն որդեակ իմ, թէ որ զանիկայ Թողուս, ան ալ քեզ պիտի մերժէ յաւիտեան։ Ի՞նչ սարսափելի խորհրդածութիւն մըն է մերժուիլ ան Աստուծմէն՝ որուն շնորհքը կեանք է, և որուն գթութիւնը կեանքէն աղէկ է. մերժուիլ Աստուծոյ որդւոցը ընտանութենէն, և իր երեսին տեսութենէն զըրկուելով՝ յաւիտենական կորստեան դատապարտուիլ։

"Ո՛ղեակ իմ, ի՞նչպէս կրնամ դիմանալ ան սարսափելի խորհրդածութեանը։ Փնտռէ զենքը քանի որ կրնաս գտնել, խնդրէ զենքը քանի որ մօտ է. թէ որ զանիկայ փնտռես, պիտի գտնես. սակայն աս միտքդ ըլլայ որ՝ եթէ զանիկայ Թողուս, ան ալ քեզ յաւիտեան պիտի մերժէ"։

Digitized by Google

Ո՛րդեակք, ասանկ խօսքեր լսելով՝ սրտերնիդ չը հալեր։ Կարելի՞ է որ ձեր ծնողքներէն ու անոնց Աստուծմէն յաւիտեան զոկուելնուդ վրայով խորհիք, առանց դառնապէս վշտանալու։ Լսեցէ՛ք ասիկայ, ու սոսկացէ՛ք։ Բարեպաշտ ծնողաց զաւակները՝ որ զԱստուած կը թողուն, ընդհանրապէս խիստ չար մեղաւորներ են, և անաչառապէս պիտի պատժուին։ Ձեր սրտերը ի՞նչ վիճակի մէջ պիտի ըլլան արգեօք ան սոսկալի օրը, երբոր ձեզմէ հաշիւ պահանջուի ձեր գործած բոլոր մեղքերուն և ան բոլոր ողորմութիւններուն համար՝ որոնք անարգեցիք։ Ձեր բարեպաշտ ծնողացը բոլոր աղօթքներուն, և անոնց ձեզի սորվեցուցած բարեպաշտութեան խրատներուն համար։ Աստուծոյ սուրբ խօսքը սորված ըլլալնուդ, և ան բարեգութ փրկչին աբեանը համար, որն որ ոտքի տակ առիք ու անարդեցիք։ Ասոնք ո՛րդեակք՝ սոսկալի տեսարաններ են, անանկ տեսարաններ՝ որոնք ստորագրելը մեզի անհաճոյ է, ու լսելն ալ՝ ձեզի։ Բայց աս մեր բսածները փոխանակ ձեզ խռովեցնելու, թող ձեզի քաջալերութիւն մը ըլլան

Digitized by Google

գալու բարկութենէն փախչելու ։ և յաւիտենական կեանքը ամուր բռնելու ։

Երդեօք Աստուած պիտի թողնէ՞ք. բայց ինչո՞ւ համար ։ Միթէ ամէնօրհնեալն Աստուած ձեզ մերժելի կ'ուզէ ։ Ո՛չ. անիկայ ըսած է որ ։ Աս ձեզ պիտի ժողովիմ ։ ինչպէս որ հաւը իր թեւերուն տակը կը ժողվէ իր ձագերը ։ Ինծի եկէք. ես ձեզի հայր պիտի ըլլամ ։ ու դուք ինծի տղաքներ ու աղջիկներ պիտի ըլլաք ։ կ'ըսէ Ամենակալ Տէրը ։ Ուրեմն ո՞րդեակք՝ ինչո՞ւ համար պիտի թողուք զանիկայ ։ Միթէ կրնա՞ք առանց անոր ապրիլ ։ Ո՛չ. առանց ծնողքներու ու բարեկամներու կրնաք ապրիլ ։ բայց առանց ձեր Աստուծոյն չէք կրնար ։ Երբ իրաւի առանց անոր չէք կրնար մեռնիլ ։ Մահուան ժամանակ ուրիշ բան մը պիտի չունենաք ։ բայց միայն ձեր Աստուածը. ուրեմն առանց անոր կրնա՞ք երջանիկ ըլլալ ։ Ո՛չ. անոր շնորհքը կեանք է ։ և անոր գթութիւնը կեանքէն աղէկ է ։ "Տէրը փնտռեցէ՛ք ։ քանի որ անիկայ կը գտնուի. զանիկայ կանչեցէ՛ք ։ քանի որ անիկայ մօտ է" ։

Digitized by Google

Ո՛վ իմ որդիս՝ Տէրն Ճանաչէ ,
Հարցդ Աստուծոյն հնազանդէ .
Դիշէրն իր խնամքն պաշտպան խնդրէ ,
Պահպանող աջն ցորեկուընէ ։

Կանչէ իրեն երբ պատրաստ է ,
Խնդրէ զինքը երբ քեզ մօտ է .
Սրտի մտօք ապաստաւորէ ,
Ու երկիւղիւ երկրպագէ ։

Թէ որ զինքը փուքթով խնդրես ,
Քեզ իր ականջն սիրով բանայ .
Ողորմութիւն ալ կը գտնես ,
Իր շնորհքն ալ քեզ կը մօտենայ ։

Իսկ թէ որ դուն զԱստուած մերժես ,
Երկինքդ շաւղէն ալ դուրս ելլես .
Մեղայդ մէջ սիրտ մեռնիս ,
Ուրախութիւն չսիրտ գտնես ,

---

Digitized by Google

## ԺԷ. ԱՆՊՏՈՒՂ ԹՈՉԷՆԷՆ

Ա՛ռ ապակն ալ ըստ։ Մէկը էր այգիին մէջ Լուսոյ ծառ մը տնկէր էր։ ու է կա՝ անկէց պտուղ փնտռելու, և չգտաւ։ Ըսաւ այգեպանին։ Ահա՛ երեք տարի է՝ եկած որ կու գամ ապ Լուսոյ ծառին վրայ պտուղ փնտռելու՝ ու չեմ գտներ։ Ուստի կարէ՛ ապիկայ, ինչու հողտար գետինը խափանէ։ Անիկայ պատասխան տուաւ՝ և ըսաւ։ Տէր՝ ապ տարի ալ ապիկայ Լոր պուր, մինչև որ ապտոր Բոլորտիքը փորեմ ու Լրի դնեմ, կարելի է որ պտուղ տայ։ Հապա Լի չէ՝ գալ տարի կարէ՛ ապիկայ։

Ղուկ. ԺԳ. 6—9։

Իմ ծաղկահասակ բարեկամներս, դուք Աստուծոյ այգիին մէջի թզենիներն էք։ Աստուած մշակն է։ Անիկայ ձեզ ամենէն աղէկ հողի մէջ տնկեր է, ուր որ երկնաւոր ողորմութեան առուները կը բղխին, և քաղցր փրկութեան խօսքերը կը լսուին Աւետարանին բոլոր արտօնութիւններուն և շնորհաց միջոցներուն մէջ։

Digitized by Google

Ձեր ծնողքները ձեզ մնուցին ու ձեզի խնամք տարին։ Ընոնք ձեզի կրթութիւն տուին, ու ձեզի համար աղօթք ըրին։ Ձեր երէցներն ալ Աստուծոյ սուրբ խօսքէն շատ բաներ սորվեցուցին ձեզի. ա-նոնք Աստուծոյ խօսքին բանական և անխարդախ կաթովը ձեզ կերակրեցին, որ անով մեծնաք։ Մանաւանդ բարեգութն Յիսուս՝ որ մասնաւոր սէր ունի բոլոր հոգիներուն վրայ, իր անձը ձեր վրայ դրաւ, որ չկորսուիք, հապա յաւիտենական կեանք ժառանգէք։

Եւ հիմա՝ իմ ծաղկահասակ բարեկամներս, ի՞նչ կը յուսաք ան այգիին տիրոջմէն, երբոր իր այգիին ամէն պէտք եղած խնամքը տանելէն ետև՝ գայ և իր որթերուն ու իր թզենիներուն վրայ պըտուղ չգտնէ։ Յիրաւի ցաւալի բան մը կ'ըլլայ, թէ որ ձեզի համար այսչափ հոգ տանելէն ետև՝ տարուէ տարի գայ, ու պտուղ փնտռէ և չգտնէ։ Ընկիկայ պիտի չսպասէ՞ որ դուք սրբութեան պըտուղներ բերէք ի գովեստ և ի փառս Աստուծոյ։ Դուք որ ձեր մատաղ հասակէն սորվեցաք զԱստուած Ճանչնալ, զանիկայ սիրել, և անոր ծառայել, ա-

նոր աղօթք ընել, և զանիկայ գովաբանել, ուրիշներէն ի՞նչ աւելի բան կ՚ընէք։ Մտածեցէք մէյմը՝ թէ ո՛րչափ խեղճ ու դժբաղդ տղաքներ կան, որոնց քար ծնողքները բնաւ անոնց սորվեցուցած չեն զԱստուած ճանչնալ՝ որ զիրենք ստեղծեց, և ան Փրկիչը՝ որ մեռաւ զիրենք փրկելու և ազատելու համար։ Անանկներուն պիտի չխղճաք, ու անոնց համար պիտի չաղօթէք։ Աստուած աւելի բան կը պահանջէ ձեզմէ՝ քան թէ անոնցմէ։ Դուք թէ և նորահասակ էք, բայց կրնաք քիչ մը պտուղ տալ։ Անիկայ կը սպասէ ձեզմէ պարկեշտ, խոնարհ, և հլու ըլլալ, ու ձեր ծնողքներուն հնազանդ, և ամենուն հետ սիրով և քաղցրութեամբ վարուիլ։ Սակայն գուցէ առաջին, երկրորդ, կամ երրորդ տարին եկաւ, ու ձեր վրայ ասս պտուղներէն մէկն ալ չգտաւ. այսինքն ո՛չ Աստուծմէ վախնալ, ո՛չ իր վրայ սէր ունենալ, ո՛չ իրեն աղօթք ընել, ո՛չ ձեր հոգիներուն համար հոգ տանիլ, և ո՛չ ալ երկինքի կամ դժոխքի վրայով մտածել։ Աղդարև ցաւալի բան մըն է։ Անիկայ պատրաստ է ձեզի բարիք ընելու, և դուք

տակաւին զինքը մեծարել չէք ուզեր։ Ուրեմն իրաւունք չունիք վախնալու թէ իր այգեպանին պիտի ըսէ. «Կտրէ՛ ա-տիկայ, ինչո՞ւ համար գետինը խափանէ»։ Յիշեցէք որ ամէն անպտուղ ծառը ա-նիկայ արմատաքի կը խլէ, և դուք չէք գիտեր թէ ո՛րչափ շուտ պիտի խլուիք։ Ցորաբոյս տունկերը շատ անգամ մէկ տեղէ ուրիշ տեղ կը փոխադրուին. զգու-շացէք որ չըլլայ թէ դուք ալ բարկու-թեամբ փոխադրուիք՝ անպտուղ ըլլա-նուդ համար։ Յիրաւի ցաւալի բան է մինակ երկրին խափանարար ըլլալը, աշ-խարհի վրայ ապրիլ առանց բարի ըլլա-լու, կամ մեր բոլորտիքը եղողներուն բարիք ընելու։ Մինակ տունկերը մեր պարտէզներէն կը խլենք, և այրուելու որոշուած խոտերուն մէջը կը նետենք։

Մանկ ալ վերջին օրը Աստուած պիտի ըսէ իր հրեշտակներուն. «Ժողվեցէք ո-րոմը», այսինքն չարերն ու անպիտանները, «և զանոնք խուրձ խուրձ կապեցէք այ-րուելու համար»։

Ամենօրհնեալն Աստուած չուզեր որ մէկը կորսուի։ Անիկայ կը սպասէ ձեզի դիմուիլն ընելու։ Անիկայ տարուէ



Digitized by Google

տարի կու գայ պտուղ փնտռելու. ու երբոր տեսնէ որ ալ յոյս չկայ, պիտի ըսէ. «Կտրէ՛ ատիկայ»: Ընդիկայ կը յուսար տարուէ տարի, որ ծաղկի ու պտուղ տայ: Բայց աւա՜ղ, ալ իր յոյսը կտրեց ձեզմէ: Եւ Հիմա ան սոսկալի վճիռը կու տայ՝ ըսելով. «Կտրէ՛ ատիկայ, ինչո՞ւ համար երկիրը խափանէ»: Սակայն տեսէք որ բարեգութ այգեպանն Յիսուս բարեխօսութիւն կ'ընէ ձեզի համար՝ ըսելով. «Ո՛վ Հայր իմ, աս տարի ալ ատիկայ թող տուր: Յիրաւի ատոր շատ խնամք տարիր, ատոր համար շատ համբերութիւն ցուցուցիր տարուէ տարի, և դեռ անբեր ու անպտուղ եղաւ». և Հիմա իր պտուղ տալուն վրայով խիստ քիչ յոյս կը մնայ. այսու ամենայնիւ երկայնամիտ եղիր տարի մը ալ: Զեմ կրնար երեսէ ձգել: Աս տարի ալ թող տուր ատիկայ: Թող քիչ մը ալ փորձուի խրատով, յանդիմանութեամբ, և պատժով. գուցէ ան սիրտը՝ որ Հիմա կարծր է, ամոքի ու կակղանայ. ան բնութիւնը՝ որ Հիմա անհամբոյր և կամակոր է, քաղցր ու հեզ ըլլայ. ան-հնազանդ տղան՝ հլու և հնազանդ ըլլայ,

Digitized by Google

և ան տղան՝ որ գրեթէ կորստեան դուռն է հասեր ։ Աստուծոյ որդի ու երկնից ժառանգ ըլլայ"։ Ինատենը անշուշտ երջանիկ պիտի ըլլայ անիկայ ։ Երկինքի մէջ ալ ուրախութիւն պիտի ըլլայ • քանզի ան տունկը՝ որ մոռած էր ։ նորէն կենդանացաւ ։ և Աստուծոյ գրախտին մէջ պիտի ծաղկի յաւիտեան ։

Ինչու ըսեմ որ՝ "Լեռ չատ կանուխ է ։
Երկնից ու մահուան վրայ խորհելու" •
Օհ թոռմի ծաղիկ մ՝ երբ պեռ կէս օր է ։
Կընայ այսօր շունչս յանկարծ կտրելու ։

Ոնէ որ ապստամբ սիրտս կը մերժէ ։
Ան փափաքելի հրաւէրն երկնային •
Պիտի չաղատիմ մեղայ կապերէ ։
Ա՛չ ալ ես հանիմ ներման խոստմունքին ։

Ոնէ Լուրբ Դիրքս կարդալն՝ և աղօթքն ալ մերժեմ,
Ի՞նչ ընեմ երբ Տէրն դասամբ երդեցնայ ։
Ոնէ իմ աղերսիս՝ ուրչաի թախանձեմ,
Իր սուր ականջներն պիտի չբանայ ։

Ոնէ մերժեմ իր շնորհքն ու սրտամիտիմ,
Ի՞նչ ընեմ երբ ինքզ դասամբ սրտմտի •
Իր զուարթն ու սէրը բարկութեան փոխուին ։
Օ՜հ գետնատապած ձգէ խղճալի ։

Ան ատեն՝ ի զուր ներում կը խնդրեմ ։
Աղերսս աղաչանքս պարապը կ՝երլեն •
Ա՛լ ժամանակի յոյս մը չմնար ։
Երբոյհս երեսն ալ տեսնելու չեմ ։

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

3 2044 038 354 676

Digitized by Google

Digitized by Google